



ԱՊՈՒԵՆԵՐՈՒ

ՏԱՐԵՑՈՅՑԸ

(Միմիայն սրամիս անձերու գործածութեան յառուկ)

1912

(Տոմարի հիմնական բարեփոխմամբ եւ ամիսներու, տօներու եւ
եղանակներու պատճան կարգադրութեամբ)

ԳՐԵՑ

Ե Բ Օ Տ

=====

ՀՐԱՄԱՆԱԴ ՏՈՄԱՐԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԺԱՌԻՆ

Տպարան „Շ Ա. Շ Թ.“

ԴԱԼԱԲԻԱ

9477

ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԵՏՔԸ ՇԵՇՏՈՂ ՄԵԿ ՔԱՆԻ
ԱՆԻՄԱՍՏ ԽՕՍՔԵՐ ՈՐՈՆՔ ԻԲՐԵՒ ԱՆՀԵՐՔԵԼԻ
ՓԱՍՏ ՊԻՏԻ ԶԱՆԱՆՔ ԿԱԼԵՑՆԵԼ ՄԵՐ
Լ Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ն Ե Ր Ո Ւ Ն

Հիմնելով Ապուճերու յատոկ տարեցոյց մը
նպատակ չունինք մեր ազգին մէջ ապուռութիւնը
խցալերելու. բայց կը կարծենք թէ հրամայողա-
կան պահանջ մըն է այսպիսի տարեցոյցի մը
տպագրումը, բանի որ մեր մտառուական ամեն
դասակարգները ունին իրենց ուրոյն տարեցոյցնե-
րը: Օրինակի համար՝ գրագէտ ու բանասեղծ
երիսասարդութիւնը ունի Շանքի ՄԵՐ ՏԱՐԵՑՈՅՑԸ,
լրջախոնի ու բանասէր հասունարիմութիւնը ունի
թէոդիկի ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ, ո՞չ պոլսերնակ
պատճենութիւնը ունի Ասիակ Մեսոպոտամիա ԳԱՒԱ-
ՈՒ ՏԱՐԵՑՈՅՑԸ, գուարնասէր եւ երգիծատենչ նայ
մտառուականութիւնը ունի ԿՈՒԿՈՒԿԻ եւ ԿԱՎՈՇԻ
տարեցոյցները, ոօներու սփրահար եւ պանեցո-
ղութեանց ուշադիր բարեպահը իկ խարո-
ւութիւնը ունի Տէ՛ր Խորէն խահանայի պատրաս-

12273-58

Տաճ Ա. Փրկչեան Օրացոյցը, միայն խեղին առ
պուտենեն են որ չոնին իրենց յատուկ սարեցոյց
մը ոռուն մէջ կարենան գտնել սփոփանի ու մը-
իիրարութիւն։ Պէտք է ընդունիլ որ ապուտենը ը-
այս օրուան օրս մեր ազգին մէջ արհամարհելի բա-
նակութիւն մը չեն ներկայացներ. բայց դժբախ-
սարա մինչեւ հիմա որու կազմակերպութիւն մը
չունենալով՝ չեն կրցած իրենց արժանավայել դիրքը
գրաւել։ ԱՊՈՒՇՆԵՐՈՒ ՏԱՐԵՅՆՅՅՅԼ նապատակ ունի
միուրեան կապ մը ըլլալու բոլոր հայ ապու-
տենու միջեւ, ըլլան անոնի Ռողդափառ, Կարողիկ,
եւ կամ Բողոքական, որովհետեւ ապուտութիւնը
կրօնական խորութիւն չի ճանչնար։ Այն օրն ուր
յաջողինին հայուրեան կորիզը կազմող ապուտեն-
ը ի մի հասաթել եւ իրարու կապել, մեր նապատա-
կին հասած պիտի ըլլանի եւ միհենոյն ատեն մեր
վարձարութիւնն ալ սացած։



ՀՈՄԱՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Ներկայ 1912 թուականը ցաւօք սրտի պէտք է խոս-
տովանին որ նահանջ է, այսինքն իիչ մը աւելի փոր-
ձանեներ մեզ կը վերապահի բան միւս սովորական սա-
րիները։ Այժմէն կարելի է գուշակել որ տարւոյն ընթաց-
ին մէջ պիտի ունենան, եղերայէն զատ, ժանախա,
ծաղկախա, բիթո եւ ուրիշ այս տեսակ համահարակներ։
Հաւանական է նաեւ որ այս նահանջ տարին մէկ խնի
մեծ հրդեհներու ալ պատճառ ըլլայ, որոնց թերեւս ըն-
կերանան երկրաւրդի գորաւոր ցնցումներ եւ որոնց յա-
ջորդեն նեղեղանման անձրեւներ, կարկուտ, մրրիկ եւն։

Տոմարական զիտելիիներու կարգին մէջ չմոռնանին յի-
ւեցնելու որ մեր բուն հայկական սարին է ՏՆԵ-ՏՆԶ, իսկ
հայ տոմարական բուականն է ՈՉԿԱ-ՈՉԿԲ։ Հայ Յե-
ղափոխական բուականներուն մէջ լիւենի ՀՍԹԿ, ՀՅԴ եւ
ՄԻՀ, առաջինը ՀայՄահմանդրական Ռամկավարեւու
սօներուն յատուկ, երկրորդը Հայ Յեղափոխական Դաւ-
ենակցուրեան պատարազաւատոյցին համար եւ երրորդը
Սոցիալ Դեմոքրաք Հնչակեաններու ծիսարանին հա-
մեմատ։

Օրացոյցներու մէջ ընդհանրապէս կը հանդիպինք
շարժական եւ անշարժ տօներու։ Խնչպէս իրենց անուննե-
ալ կ'երեւայ, առաջինները փոփոխման ենթակայ են,
իսկ երկրորդները միւս եղածնուն պէս կը մնան։ Այս-

պես, օրինակի համար, Մրգոյն Թումելիի Երկարուղուոյ, Մրգոյն Օսմաննան Քօնսոլիսի, Մրգուհուոյն Թրանսվալի եւն. տօները միշտ ելեւէջներու ենրակայ՝ հետեւաբար տարձական են: Անշարժ տօներուն մէջ յիշենք մասնաւորաբար Մրգոյն Երուսաղիմայ խնդիրը, Մրգոյն Օրմաննանի խնդիրը եւ բաղդակցին նորա՝ Մրգոյն Երեցեանի խնդիրը եւ բնդիմանրապէս բոյոր այս տօները որոնք մեր ազգային ժողովի օրակարգին մէջ անցած են:

Այս տարուան տանուտերն է, ըստ մեր պատօնական օրացոյցին, Զուկն: Տէր Խորեն Տահանայ Յարուբիւննան ծրսեր թէ այս տանուտերը տապլա՞ծ թէ խաւած է. ամէն պարագային բարեբախտուրիւն մըն է որ տանուտերը Զուկն է եւ ո՛չ թէ Վիշապը որուն խօսք հասկցնել դրժուար պիտի բլար, ամսավճարներու յապաղման պարագային:

Տոմարական զիտելիքներուն մէջ նկատելի են նաեւ որ «բուն ձայնն աձ. բձ. գձ. դձ. աջակողմեան դասուն են սկսեալ ի բուն Բարեկենդանէ» եւ կը համապատասխաննեն Վահան Թէկեանի, Դաւիթ Տէր-Մովսէսեանի, Արիստակէս Գասպարեանի եւ Պարգեւ Փափազեանի բուն ձայններուն: Իսկ ձախակողմեան դասուն թձ. ժձ. խձ. կձ. ձայնները կը ներկայացնեն Վարդգէսի, Վուամեանի, Հմայեակ Խորովեանի եւ Միհրդաս Հայկազի ձայնները:

Երկնային Պատերազմական Ատեանի որոշումով ներկայ տարւոյն մայիս Ծին:

Արեն առաւտօնեան թէրը բոլորական դադարման, կամ ըստ տոմարական լեզուի, խաւարման պիտի դասպարտուի: Վճիռը գործադրելի է Կ. Պոլսկն դուրս, հետեւաբար մեզ անտեսանելի:

Հոկտեմբեր 13—14ին նոյնպէս յիշեալ Ատեանին կողմէ դադարման վիրո պիտի սահնայ ԼՈՒՍԻՆ Երեկոյն եան օրաբերը:

Նոյն ամսուան 22ին դարձեալ դադարում ԱՐԵԿ օրաբերի:

Հաւանօրէն ԱՐԵԿԻՆ տեղ ԼՈՒՍԼՆԹԱԳ եւ ԼՈՒՍԻՆԻ տեղ ԵՐԵՒԱԿ օրաբերքները լոյս պիտի տեսնան Երկանամարին վրայ:

Գալով Գեր Տարւոյնին, Եօթներեակնին Վերադիրնին, Ինսեւտասաներեակնին, եւ մանաւանդ ըստ Լատինացւոց՝ Հռովմեական Ինդիկտիոնին, կը գոհանանք պահելով խորհրդաւոր լուուրիւն մը որ յառաջ կուգայ պարզապէս մեր սգիտուրենէն:

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՄԻԱՅՆ

Այն որ կորսնցուցած է իր Ժիզիխական կարողութիւնը եւ ջղային զօրութիւնը, բո՞դ դիմէ ԿՕՐԱՇԻՕ ՔԱՐԹԷՐԻ, Ղալաքիա, Մէհմէտ Ալի Փաւա Խան, 49.

ԲՈՒՆ ՕՐԱՅՈՅՑ

ՅՈՒՆՈՒԱՐ

ՕՐ 28

1. ՇԲ. բձ. Կաղանդ: Զուգելով տափակ հետեւող
մը ըլլալ միւս տարեցոյցներու և օրացոյցներու որոնք,
լաւագոյն դասի մը արժանի միաձայնութեամբ, այս
տարի Կաղանդը կիրակի օր դրած են, մենք շաբաթը
նախընտրեցինք, այս կերպով թէ՛ դպրոցականներու և
թէ պաշտօնեաններու օր մը աւելի հանգիստ չնորհել ու-
զելով: Բաց աստի մեր ընդունած դրութեան չնորհիւ
կաղանդի զիշեր զուարձութեամբ և արքեցութեամբ ժա-
մանակ անցնողները կրնան հետեւեալ օրը, Կիրակի, մին-
չեւ ցերեկ անկողնէն չելլել և իրենց յոդնած մարմինը
կաղդուրել:

2. Կիր. Պահք

3. Կիր. (բ.) Նորութիւն մը որ բոլորովին մեր տա-
րեցոյցն յատուկ է, այն է ատեն ատեն Կիրակին կրրկ-
նել և Երկուշաբթիները զանց տանել: Կարծենք մեր լու-
թեցողներուն մեծամասնութիւնը գոհ պիտի միայ մեր
այս կարգագորութենէն:

4. ԴԵ . Տօն սրբոյն Միհրդատայ Հայկազնի Տրիպու-
ակցւոյ և երկուսաման Հովանոցաց նորա :
5. ԴԵ . գԿ . Օր պահոց :

Տօքագին աւուրժ

(Առի՞ք մի հիմա , ով աւազակ ածխալաճառներ և
փայտավաճառներ որ անհամիկր կը սպասէիք ցուրտ եղա-
նալին՝ ձեր ապրանքները սուղ սուղ վաճառելու համար ,
ահա՛ Ապուշներու Տարեցոյցը վեր ի վայր շրջեց
ձեր շիլ հաշխները բո՛ւն իսկ Յունուարի սկիզբը աօթա-
գին օրեր նշանակելով) :

6. ԵՇ . Ճրագալոյց Ծննդեան և Աստուածայայտ-
նութեան և Աւագ Հինգեաբբի , Ոտնլուայ :

8. Աւագ Ուրբար . պահք . Յիշատակ Զարչարանաց
և Խաչելութեան :

9. Աւագ Շաբար :

10. Կիրակի . Տօն ԾՆԵԴԵԱՆ և Աստուածայայտնու-
թեան և ԶԱՏԻԿ Յարութեան Տեառն Մերոյ Յիսուսի
Քրիստոսի :

(Պատիկ նորութիւն մը եւս որ մեր տարեցոյցին յա-
տուկ է և որուն վրայ կ'արժէ քանի մը խօսք ըսել :
Ծնունդը կիրակի օր բերելով ու Զատիկն ալ անոր կը-
ցելով մեր բո՛ւն նպաստակը եղած է չնորհաւորական այ-
ցելութիւնները կէս առ կէս զեղչել և միեւնոյն ատեն մեր
էնափ դասակարգը փրկել կարգ մը տօնական աւելորդ
ծախքերէ : Գիտենք որ մեր այս բանաւոր կարգադրու-
թեան հաշտ աչքով չպիտի նային մեր եկեղեցական հայրե-
րը , բայց բարեպահտաբար մեր տարեցոյցը հրապարակ եղած
միջոցին ո՛չ կաթողիկոս ունինք , ո՛չ Երուսաղեմի պատ-

րիարք և ո՛չ ալ կ . Պոլսոյ պատրիարք որոնք մեզի դէմ
խոշընդուններ յարուցանեն : Արդէն աթուներու այսպա-
րապութենէն օգուտ քաղելով է որ ձեռք զարկինք օ-
րացոյցի հիմնական բարենորոգման :

11. Կիր . Բ . օր Ծննդի ու Զատկի : Պահք . 12 ,
Կիր . Գ . օր Ծննդի ու Զատկի . ծոմ 13 , Կիր Դ . օր
Ծննդի ու Զատկի . ծոմ : 14 , ԵՇ . պահք : 15 , ՈՒՐ . ծոմ :

16 . Շբ . պահք : Յիշատակ առաքման Միհրդատայ
Հայկազնի առ Տրիպութեցին :

17 . Կիր . ծոմ : 18 , ԲՀ . պահք : 19 , ԴՀ . ծոմ :

Զերմ եւ չոր

(Ուշադիր ընթերցողը եթէ հաճի պարզ բաղդատու-
թեան մը դնել մեր տարեցոյցը միւս սովորամոլ ու ա-
ւանդապաշտ օրացոյցներու հետ , իսկոյն պիտի նշմարէ
թէ ինչ գնահատելի առաւելութիւններ կ'ընծայէ մերը :
Նախ նկատի առնելով մի գնոյն բարձրացումը , մանա-
ւանդ ձմեռուան եղանակին , պահք և ծոմ նշանակեցինք ,
փոխն ի փոխ , ամէն օրերու համար : Եւ ասիկա ըրինք
առանց ձեմի կամ լուրիայի վաճառականներէ կաշառուած
ըլլալու , ինչպէս գուցէ չարամիտները կարծեն , այլ մի-
միայն մեր էսնափ դասակարգին օգուտը աչքի առջեւ-
ունենալով : Ասկէ զատ , գիտնալով որ մեր մաքրասէր
հայ տանափիկները սովորութիւն ունին ընդհանրապէս
երկուշաբթի օրերը լուացք ընելու , որոշեցինք երեք-
շաբթի օրերուն համար նշանակել ջերմ եւ չոր օդ մը ,
որպէսպի կարենան իրենց թաց լաթերը սրտի հանդար-
առութեամբ չորցնել :

20. ԴՀ . պահք : 21 ԲՀ . դՃ Արքոցն Սարգսի և

որդւոյ նորա Մարտիրոսի Գոչունեանց և չորեքտասահբաժմականացն :

Ախորժելի օդ

21. Եշ . Ծոմ վասն դերութեան և աքսորանաց
Միհրդատայ Հայկազն ի Ֆիղան :

22. Ուր . պահք 23 ՇԲ . ծոմ : 24 Կիր . պահք 25
Կիր . ծոմ : 26, Դշ . պահք :

Զերմ եւ չոր

27. Դշ . ծոմ : 28 Եշ . պահք

Հոս կը վերջացնենք յունուար ամիսը սա ընդհանուր
և հիմնական սկզբունքն առաջնորդուելով թէ՝ անհաճոյ
եղանակներու ամիսները հարկ է կրծատել և ի փոխարէն
երկարել հաճելի եղանակներու ամիսները : Ցաւալի է
որ այս տարրական բարենորոգումը մինչեւ հիմա ո՛չ մէկ
լուրջ տոմարագիր յանձն առած է կատարել :

ԱՄՐԻԹԱ

Սնիրամես անոնց համար որ կը տառապին
անկարողութենի եւ զղային բայխում:

Դիմել ԿՕՐԱՇԻՕ ՔԱՐԹԷՐԻ, Պալարիա,
Մէհմէտ Ալի Փաւա Խան, 49.

ՓԵՏՏՐՈՒԿԱՐ

ՕՐ 14

Ինչպէս առաջին ակնարկով պիտի տեսնեն ընթերցողները հարիւրին լիսուն զեղչ մը ըրինք Փետրուար ամսուն վրայ , զայն վերածելով միայն 14 օրի : Յայտնի է որ տարուայն ամիսներուն մէջ Փետրուարը ամենէն անհաճոյ ամիսներէն մին է , մանաւանդ Պոլտեղիներուն համար , որոնց յատկացուած է սոյն տարեցոյցս մամնաւորապէս : Ուստի վստահ ենք որ ո՛չ ոք դժգոհ պիտի մնայ մեր այս կարգադրութենէն : Միայն թէ հարկ էր խօսք հասկցնել կարգ մը սուրբերու որոնց տօնախմբութիւնը կը կատարուի Փետրուարի երկրորդ կիսոյն մէջ : Ասոր ալ ճարը գտանք : Յունաց Տիմոթէոս և Ստաթէոս ճգնաւորները և Գրիգոր աստուածաբանը և Լատինաց Թովմայ Աղուինացին բացէ ի բաց ճամբեցինք մեր տարեցոցէն , «առել չի կայ» ըսելով : Խակ Ս . Կիւրեղ Երուսաղեմացի հայրապետը , միւս կիւրեղ եպիսկոպոսը և մայրը Աննա և Ս . Յովհաննէս Երուսաղմայ հայրապետը միացուցինք իրենց համանուն և համացեղ սուրբերուն : Գալով Յովհաննէս Օձնեցւոյ , Որոնսեցւոյ և Գրիգորի Տաթեւացւոյ , մամնաւոր յարգանք մը ընելու համար իրենց , Փետր . 14ին մէջ տեղաւորեցինք իրենց տօնը :

1. Եշ . ակ . պահք :

2. Եշ Սրբոց Վարդանանց գօրավարացն մերոց հազար և երեսուն և վեց վկայիցն , որք կատարեցան ի

մեծ պատերազմին, և սրբոց թատերագիր հեղինակացն որք զվարդան զօրավարէ ճառեցին և սրբոց գերասաւնացն որք զվարդան զօրավար ներկայացուցին ի թատերաբեմի և ամենաշն սուրբ հանդիսականացն որք քրտնաթոր տքնութեամբ և յօրանջմամբ՝ ականջալուր և ականատես եղին յիշեալ թատրերգութեանց :

3. ՈՒԻՐ. Պահք : 4. ՇԲ. Ծոմ :

5. ԿԻՐ. Բուն Բարեկենդան, դիմակաւոր և անդիմակ :

Տարեցոցիս բարոյական հանգամանքը թոյլ չի տարմեզ որոշել պարահանդէսներու մէջ իդական կուրծքերու, թեերու և իրաններու մերկ ցուցադրութեան սահմանները : Կրնապինք Բարեկենդամի շաբաթը տօրագին աւուրք մը դնելով անուղղակի կերպով քաջալերել մեր փափկառուն տիկնայքը որ իրենց ծածուկ հրապոյրները անպատիժ կերպով ենթարկեն յայրատ և լսիրշ նայուածքներու խուզարկութեանց, բայց չըրինք այդ բանը և թոյլ արշինք որ բնութիւնը իր յարմար տեսած եղանակը որոշէ Բարեկենդամի օրերուն համար :

Ծպտումներու մասին ալ ո և է պատուէր կամ խրատ չունինք տալու : Ամէն մարդ կրնայ ուզած դիմակը անցընել երեսին, բա՛ւ է որ չճանչցուի ու դիմացինը կարենայ խարել մինչեւ ետքը : Նորաձեռութեան կարգ անցած դիմակներուն մէջ յիշենք, դիւրութիւն մը տալու համար մեր ընթերցողներուն, աղասականի ու յեղափոխականի դիմակները, հակաօրմանեանականի ու հակաերէցեանականի դիմակները, վարչագէտի ու դիւանագէտի դիմակները, ևն : Սյա ամբողջ դիմակներն ալ լաւ են, բայց որ, ինչպէս ըսինք, մեր բուն դէմքը կարենանք ինսամքով ծածկել :

6. ԿԻՐ. Բարեկենդան : 7. ԿԻՐ. Բարեկենդան :

8. ԿԻՐ. Բարեկենդան : Զորս օր վրայէ վրայ Կիրակի և Բարեկենդան նշանակելով՝ կարծենք թէ ոչ միայն լիովին գոհացում կուտանք մեր կայթասէր և թեթեւարարոյ երիտասարդներուն և օրիորդներուն, այլ միենոյն ատեն շատ մը գինեպաններու երախտագիտութեանը կ'արժանանանք :

9. ԵՇ. Պահք . 10. ՈՒԻՐ. Ծոմ . 11. ՇԲ. Պահք : 12. ԿԻՐ. Ծոմ . 13. ԲՇ. Պահք : 14. ԳՇ. Տեառլուպաջ, Սրբոցն Հայրապետացն մերոց Յովհաննու իմաստասիրին Օձնեցւոյ, Յովհաննու Որոտեցւոյն և Գրիգորի Տաթեացւոյն :

Ա Պ Ր Ի Լ

ՕՐ ՅՈ

Քիթերնուդ տակէն պակ պաղ մի՛ խնդաք, ով դիմացինին աչքին մէջ շիւղ վնասող և իր աչքին մէջի գերանը չանունող կեղծաւոր կրիտիկոններ, մի՛ կարծէք թէ Ապոււներու Տարեցոյցին հեղինակը մոռացութեան վայրկանի մը մէջ, յանկարծ Փետրուարէն Ապրիլ կը յատքէ : Խորհեցէ՛ք թէ այն որ չվարանեցաւ Փետրուարը հարիւրին յիսուն զեղչել՝ կրնայ նաև Մարտը բոլորովին ջեջել : Եւ ինչո՞ւ չպիտի ջնջէլնք այդ Մարտ ամիսը որ Օրացոյցներու և Տարեցոյցներու ամօթն ու նախատինքը եղած է մինչեւ այսօր և միենոյն ատեն թշուառ մարդկութեան համար անտանելի փորձանք մը և յուսահատութիւն մը :

Այս՛, տիկնայք և տեարք, Մարտը մեռաւ և ես ու չկա եմ... : Մեռաւ իրեն հետ տանելով, ցրտաշունչ

Քամին, անձրեւն ու ցեխը, հարբուխն ու ցղատապը, ախըրը պէտ իւլ աճուզը կամ պառաւանց ցրտոյն վերջաւորութիւնը, այո՛, զրկեցինք այդ աղիտաւոր ամիսը մոռացութեան ամդունդը. «անդ կացցես և զլոյս մի՛ տեսցես» ըսելով : Մարտին հետ մնաս բարձգ նաև Տաճկաց ելեւմտական թուականին տարեմուտը, Պարսից ամանորը կամ Նէլլուզը և Յունաց Վլասոյ եպիսկոպոսին տօնախմբութիւնը : Մարտին հետ գարնանամուտն ալ հապը կլեց, ինչպէս նաև Հրէից Ապիս ամիսը, Ղազորսոյ յարութեան յիշատակը և Պէլճիգայի Ալպէրթ Ա. թագաւորին ծննդեան տարեգարձը, ինչպէս նաև Պալքըրի այազմային տօնը : Բայց աէտք էր որ բոլոր այդ զո՞րութութիւնները ըլլացին, որովհետեւ առանց հաւկիթ կոտրելու ձուազեղ եփել կարելի չէ : Այդ ընդհանուր կոտորածեն փրկեցինք միայն Ծաղկազարդը, իսկ Զատիկը առշդէն, ինչպէս զիտէք Ծնունդին հետ կատարեցինք այս տարի : Այսպէս ուրեմն՝

1. Կիր . ԾՈՂԿԱԶԱՐԴ և Նոր Կիւրակէ, որ պաշտօնական խարերայութեանց : Զենք զիտեր թէ չարամիտները մեր ընթերցողները խաբելու համոր այսօր ի՞նչ սատանայական միջոցներու պիտի դիմին : Այսուհանդերձ կ'ուզենք մէկ քանի զգուշական խրանիկը տալ : Այսպէս, եթէ ձեզի ըսին որ Երուանդ Տէր անդրէասեան Փամանակին մէջ գեղեցիկ յօդուած մը զրած է, մի՛ հաւատապը, որովհետեւ Սպրիլ մէկ է : Եթէ ըսին որ Տրիպոլիսը ետառինք իտալացիներուն ձեռքէն, մի՛ հաւատապը, որովհետեւ Սպրիլ մէկ է : Եթէ ըսին որ Անատոլուի մէջ սցսօր հայ մը չէ սպաննուած, մի՛ հաւատապը, որովհետեւ Սպրիլ մէկ է : Մի՛ հաւատապք Բյւզանդ Քէչեանի քաղաքաքանին գուշակութիւններուն, որովհետեւ Սպրիլ մէկ է : Մի՛ հաւատապք Եղուարդ Գողանձեանի քերթողակնն

տաղանդին : որովհետեւ Սպրիլ մէկ է : Մի՛ հաւատապք Հմայեակ Դիմաքսեան եպիսկոպոսին հայրենասահրական յայտարարութիւններուն, որովհետեւ Սպրիլ մէկ է, ու մի՛ հաւատապք Հմայեակ Սրամեանցի Սօցիալ Դէմօկրատ Հնչակեանութեան, որովհետեւ Սպրիլ մէկ է : Եթէ Մի՞րդատ Հմայեակնէն հովանոց գնէք՝ մտքերնիդ բերէք որ այսօր Սպրիլ մէկ է : Եթէ Յ. Ալիքիարի հետ խօսքի բանութիք՝ մի՛ մօնաք որ այսօր Սպրիլ մէկ է : Եթէ Արքի Մուպահեաճեան Մանկունի սրբազնութ գովաբանէ միշեցէք որ այսօր Սպրիլ մէկ է :

12273-

Ահա՛ մեր զգուշական խրանիկը որոնք վատահ ենք որ բաւական չեն ձեզ խարերայութիւններէ բալորովին զերծ պահելու համար, բայց գոնէ մասամբ օգտակար կրնան ըլլալ : Կը յուսանք որ մեր Տարեցոյցին յաջորդ հաստորով կրնանք նաև չնչել այդ ապրիլ մէկը որ միամիտներու համար փորձանք մը եղած է դարերէ ի վեր :

2. Կիր . 3. ԳԾ . Ջերմ և չոր աւուրք վասն ցամաքեցուցանելոյ պլուացքս :

Միօրինակութիւնէ խուսափելու համար, մի առ մի չենք լիշեր օրերն ու թուականները : Ուշիմ ընթերցողը հասկցաւ արդէն որ մեր Տարեցոյցին համեմատ Երկուշաբթինները ընդհանրապէս տեղի կրտան կիրակիններուն, որոնք կը կրկնուին : Երեքտաթիթի օրերը միշտ չոր ու տաք օրեր ունինք մեր տանտիկիններու տրամադրութեան տակ : Ասկէ զատ այնպէս մը կարդաղրեցինք որ Սպրիլ ամսուն մէջ մեր Տարեցոյցի լնթերցողները իրենց տրամադրութեան ներքի ունենան ախորժելի աւուրք, զուարեալի աւուրք, և պայծառ եղանակներ, բաւականաշախի քանկութեամբ : Մեր սիրեցեալ վեհապետին ՍՈՒԼԹՈՒՆ

ՄԵՀՅՄՄԷՏ ԻՀԵՇԱԾի գահակալութեան տարեդարձը որ
Ապրիլ 14 Շաբաթ օր կը պատահի, անփոփոխ պահեցինք
յայսմ յետէ մինչև յաւիտեան : Խումանիոյ Կարող Բ. թա-
գաւորին ծննդեան տարեդարձն (8 Ապրիլ՝ ըստ հնամոլ
օրացուցազրոց) բարով եկարը դրինք :

ԿՈՐԱՇԻ ՔԱՐԹԵՐ

Եր դեղահատերով կը բուժէ միզիքական
անկարողութիւնը եւ կազմուէ ջիղերը:
Հասցէ. Պալարիա, Մէհմէտ Ալի Փաւա
Խան, 49.

ՄԱՅԻՍ

ՕՐ 80

Յունուարէն զեղչուած 3 օրերը Փետրուարէն զեղ-
չուած 15 օրերը և ջնջուած Մարտ ամսուան 31 օրերը
աւելցնելով Մայիսի 31 օրերուն վրայ, այս ամիսը եր-
կարեցինք մինչև օդ օր: Մեր այս կարգութեանը
ինքնին բաւական պերճախօս է և պէտք չենք զգար այս
պերճախօսութեան վրայ մեր կողմէն ունայնարանութիւն
մին ալ բարգելու: Բանաստեղծներու ամիսը այսպէս եր-
կարելով կը յուսանք նոր զարկ մը տալ մեր հայ քեր-
թողական արուեստին և քաջալերել մեր երիտասարդ
բանաստեղծները:

Սովորումով օրացոյցները Մայիսի մէկը Երեքշաբթի
օր մը նշանակած են: Բնականաբար մնաք այդպիսի տըլս-
մաբութիւն մը չէնք կընար նուիրացործել, ուստի մեր
ուղղութեան հաւատարիմ, Մայիսը կը սկսինք Կիրակիով
և կը շարունակենք Կիրակիները մինչև Մայիս 6: Մայիս
երեք կիրակի (բատ աւնդամուներու Հինգշաբթի) ան-
խախտ կը պահենք Համբարձումն Քրիստոի տեառն մե-
րոյ յերկինս, որով կարելի կ'ընծայինք Ս. Փրկչի հրւան-
դանոցին 80րդ տարեդարձը, ինչպէս նաև վիճակ քաշե-
լու ժողովրդական սովորոյնը:

Նկատելով Տարեցոյցիս զուտ յեղափոխական համ-
գամանքը և այն համակրական ընդունելութիւնը զոր
արդար իրաւունքով մը կ'ակնկալէ Դաշնակցական գոր-

ծօն ու ամդործ շարքելէն, նկատելով նաև Ռուսից պետութեան հանդէպ թուրքիոյ բռնած տուեղծուածային ընթացքը Տրիպոլսեան ծանօթ իրերադարձութեանց տութիւ, նկատելով նու յիշեալ պետութեան ընձեռած առաել կամ նուազ օժանդակութիւնը Պարսկաստանի անշահ Շահին՝ Մէհմէտ Սլիփ, սրուեցինք, Մայիս ամսոյ վերաքննութեան առթիւ, ի բաց վտարել մի ուն Նիքուլա Ք. կայսեր ծննդեան և թագադրութեան կրկնակ տարեդարձները որոնք հրէշային զուգաւորմամբ՝ կամ զուգադիպմամբ՝ տեղի կ'ունենան այս գեղեցիկ ամսուն Ելին և 14ին: Գիտենք որ մեր Նիկոլսոս բարեկամը հաշտ աչքով չպիտի նայի այս արտաքոյ Տարեցոյցի արտաքսման բայց թո՛ղ գիտնան ինք ու յրենները, թէ մենք այս Տարեցոյցը հիմնելով երբեք նպատակ չենք ունեցած այս կամ այն կայսեր փառասիրական փոքրիկ հաշիւները գուայնելու:

Ա՛լ աւելի շեշտելու համար այն ոգին որմէ առաջ նորդուեցանք վերսիշեալ փոփոխութիւնը ընելու համար, որուեցինք միմնցն ատեն ջնջել Սպանիոյ Ալֆօնս ԺԴ. թագաւորին ծննդեան և գահակալութեան, Անդրեյոյ ծորճ Ե. թագաւորին գահակալութեան, Ռումանիոյ Կարոլ թագաւորին գահակալութեան, Տանիմարքայի Ֆրեներիք Ի. թագաւորին ծննդեան և Սւարիոյ Ֆրանց Եօգէֆ Ա. կայսեր թագադրութեան տարեդարձները ուրոնք ամէնքն ալ Մայիս ամսուան մէջ կը պատահին ու անոնց անը հաստատել հնատեւեալ զուտ հայկական ու միանդաման պրօլէտարիական տարեդարձները:

7. Կիր. Տարեդարձ ծննդեան և բարգաւաճման Վահան Թէքէեան բանաստեղին և իջման Հոգւոյն Մուսայից ի վերայ իւր:

14. Կիր. Տօնախմբութիւն Շ Ա. Ն Թ կիսամսեաց

գրական և գեղարվուհստական հանդէսի և ամենայն աշխատակցոց նորա:

21. Կիր. Տարեդարձ և տօնախմբութիւն հինգ մուսայական պատահնեացն Լեռն էսամանեանի, Հրանտ Նազարեանցի, Եղուարդ Գոլանձեանի, Սևակայ և Փայլակի:

(Մեր Տարեցոյցէն Յիմար կուսանաց տօնը ջնջած ըլլալով՝ վերսիշեալ տօնը կը հաստատենք փոխարինութիւն մը բրած ըլլալու յոյսով):

22. Կիր. Յիշատակ գալստեան Վահանայ Մալէզեան յեղիպատէ ի Կոստանդնուպոլիս:

35. Կիր. Տօն ամենայն քերթողաց և քերթողուհեաց, ծանօթից և անծանօթից, ելեւելեաց և աներեւոյթից:

(Այսօր տեղի կ'ունենան անստորագիր կամ ծածկանունով հրատարակուած ոտանաւորներու հեղինակներուն տօները):

42. Կիր. Յիշատակ գաղարեալ բանաստեղծից:

(Այսօր իրենց տօնը կրնան կատարել բոլոր այն բանաստեղծները որոնք կամ Մուսաներու քէն ըրած են և կամ Մուսաները իրենցմէ երես գարձուցած են: Մասնաւոր անուններ չենք ուզեր յիշել, բայց կը հաւատանք թէ լեզուն պիտի կազմեն ամէն անոնք որոնք իրենց տօնը Մայիս 42ին պիտի կատարեն):

Այսպէս ուրեմն պուէտներու դիւրագրգիռ ցեղին (genus irritable vatum) հետն ալ մեր հաշիւը խաղաղութեամբ կարգադրելէ ետքը, կ'անցնինք յաջորդ ամսուան:

!! LA DERNIÈRE INVENTION !!

relative aux dents et dentiers à charnières a provoqué un perfectionnement considérable dans la science dentaire.

Les avantages principaux sont les suivants.

I.—Les dents et dentiers à charnières n'ont pas de plaques de palais en caoutchouc;

On s'y habite de suite !
Pas de difficultés.

II.—Les dents et dentiers à charnières s'appliquent avec la même solidité dans la bouche que les travaux pontés(bridge); on peut les retirer de la bouche pour les nettoyer sans aide d'un médecin. La mauvaise haleine est exclue, Les dentiers à charnières donnent par suite de leur formation naturelle et par leur propriété exemplaire une véritable beauté de la bouche.

III.—Les dents et dentiers de porcelaine à charnières ne peuvent être distingués des dents véritables à cause de leur exécution artistique et du fait que ni or ni autre métal est visible comme c'est le cas chez d'autres dents artificielles.

IV.—Les dents de porcelaine sont les meilleurs produits anglais et américains. Les charnières sont faites en or de 22 carats, les autres substances également en or excessivement fin ou en platine. Nous avons obtenu aux expositions de Londres et d'Amsterdam le grand prix et la Médaille d'Or pour nos dents et dentiers à charnières ce qui prouve leur supériorité sur tout autre produit analogue.

Edenbourg Frères,

Médecins-Dentistes, diplômés du l'Université de Berlin
Péra, Passage du Tunnel.

ՅՈՒՆԻՍ

ՕՐ 30

Մեծ վախճառութիւն մը չենք մացներ Յունիս ամսուան մէջ : Կը պահենք իր օրնրու թիւն ու կարգը այնպէս ինչպէս որ են բնդհանրապէս «պաշտօնական» կոչուած օրացոյցներու մէջ : Կը գոհանանք միայն հրամագաղփի օրացոյցին մէջ այս ամսուան սահմանուած օրագին օդերը ջնջելու և սննդ տեղ զնելու հաղցաւուն հովեր և զով ու պայծառ օդեր : Յունիս ամիսը արգէն բնգնին բաւական տաք է և պէտք չի կայ որ մենք ալ մեր կողմէն սօրագին օդ մը խօժենք անոր մէջ :

Աւրել փոքրիկ բարեկախուռ մին ալ : Յունիս ամսուան մէջ կարծես ժամադիր եղած են կարգ մը սուրբեր և սրբուհիներ մին միւսէն այլամդակ ու խժալուր . օրինակի համար՝ Խաղ եպիսկոպոս . Եպիփան Կապրացի . Բարել հայրապետ , Թէստիտոն Գաղատացի , Թալիլիս րժշկ , Թէսփիլոս , Ասիկառու , Փոտինոս , Կալիստարատոս , Պունկիանոս քահանայ , ևն ևն :

Արդ , կը հարցնենք մեր ողջամիս ընթերցողներուն . — «Ի՞նչի՞ կը ծառացեն սուրբերու տևները օրացոյցներու մէջ» : Պատասխանը շատ պարզ է :

— Այդ Սուրբերուն անունը կրող անձերուն և անոնց բարեկամներուն առիթ մը տալ տօնախմբութեան օրը հաւաքուելու և միասին օդի կամ քօնեաք ճնկելու

և շաքար ուտելու : Այս տեսակէտով ամէուշտ հարկաւոր սուրբեր են Յակոբ Մծբնայ հայրապետը, Բարսեղ Կեսարացին, Սերգիս զօրավարը, Գրիգոր Լուսաւորիչ, Յովհաննէս Մկրտիչը, ևն . որովհետեւ հազարաւոր անձեր կան որոնք Յակոբ, Բարսեղ, Սերգիս, Գրիգոր, Յովհաննէս, Մկրտիչ, ևն . կը կոչուին :

Բայց, հոգինիդ կը սփրէ՛ք, ըսէ՛ք թէ ձեր մէջ կա՞յ մէկը որ Խաղ, Թէոփախոն, Թալիլիա, Փոտինոս, Կալիստրատոս կամ Ղունկիանոս կոչուի՞ . Ապահովաբար ո՞չ : Ուրեմն ի՞նչ հարկ կայ մեր Տարեցոյցին սուզ էջերը լեցնելու այդ անօգուտ սուրբերու անուններով, քանի որ ո՞չ գինեպամին օգուտ մը պիտի ունենան ո՞չ շաքարավաճառին :

Այս սկզբունքէն մեխնելով սա եղբակացութեան հասանք թէ միեւնոյն տեսն պէտք է ջնջել յաջորդ ամբաներուն մէջ եկած հետեւեալ սուրբերուն տօները .

Ս . Կիպրիանոս, Ս . Շամունիա, Ս . Վլասոյ, Ս . Պողիքոս, Ս . Ապիտոն, Ս . Կանդիտոս, Ս . Ծամիդոս, Ս . Տուքիկոս, Ս . Ռատիկոս, Ս . Դոմիտիա, Ս . Փիլիկտիմն, Ս . Փանդալէն, Ս . Վարոս, Ս . Սեւերիանոս, Ս . Մետրոփանոս, ևն . ևն .

Այո՛, միանգտօմ ընդմիշտ ջնջեցինք մեր Տարեցոյցէն բոլոր այդ սուրբերու տօները, որովհետեւ վերոյիշեալ սուրբերը, ինչպէս տեսանք անօգուտ բեռներ, անպտուզ ծառեր են և ասոր համար, ըստ Աւետարանին՝ «հատանին ի հուր արկանին» :

Մէկ կողմէն մինչ այսպէս կարգ մը անունին գործածութենէ դադրած սուրբեր բարձրավիզ ամբարտաւանութեամբ բազմած են մեր օրացոյներու լաւագոյն տեղերը, անդին ծանօթ անձնաւորութիւններ ի զուր օրացոյցը կը թղթատեն իրենց անունին տօնախմբութեան օրը գտնելու համար :

Մեր նոր սերունդը, աւազ, Ղունկիանոս, Պանդաւէն կամ Ապիտոն կոչուելու սովորութիւնը չունի, Փայտակ, Կայծակ, Հուր, Շանթ, Երկաթ, ևն . կը կաչուի ընդհանրապէս . արդ ինչպէս կ'ուզէք որ տօնէ իր անուան տարեգարձը : Այսօր նոյնիսկ Միհրդատ Հայկազնմը ստիպուած է կա՛մ երթալ Վարդանանց հազար երեսուն և վեց վկայից մէջ խանուելու և կամ իր անուան տարեգարձը կատարելու Տաղաւարաց տօնին, սա նենդամիտ առարկութեամբ թէ՛ տաղաւար և հովանոց բառերը հայ լեզուի մէջ խնամի են իրարու և թէ ինք արհեստիւ հովանոցավաճառ է, (Ղալաթիա, Քրէտի Լիօնէի դրան ճիշտ դէմք դիմացկուն ապրանքներ ամէն եղանակներու համար, ապառիկ չի կայ) :

Բոլոր այս անպատեհութեանց արժատական դարման մը տանելու համար հանձարեղ միջոց մը խորհած ենք, զոր ընթերցողը պիտի գտնէ յաջորդ ամսուան մէջ :

ՈՎ ՈՐ ԻՆՑԻ ԴԻՄԵ

Կրնայ վստան ըլլալ թէ այիսի դարմանէ իր զըդային բայիայեալ դրութիւնը:

ԿՕՐԱՇԻՕ ՔԱՐԹԷՐ, Ղալաթիա, Մէմէս Ալի Փառա Խան, 49

ՅՈՒԼԻՍ
ՕՐ ՅՈ

1. Կիր. ՎԱՐԴԱՎԱՐ.
2. ԲՇ. Տօն ամէն այրերու որոնց անունը կը սկսի
- Ա. Տառով :
3. ԳՇ. Տօն ամէն այրերու որոնց անունը կը սկսի
- Բ. Տառով :
4. ԴՇ. Տօն ամէն այրերու որոնց անունը կը սկսի
- Գ. Տառով :
5. ԵՇ. Տօն ամէն այրերու որոնց անունը կը սկսի
- Դ. Տառով :

Մերք ցուրտ. մերք սաւ
մերք ալ ո՞չ ցուրտ ո՞չ սաւ

Խաղերնիս հասկցաք, շատ պարզ և միանումայն շատ ալ հանճարեղ է, միայն թէ հարկ էր մտածել (միշտ Քոլոմպոսի հաւկիթը): Օրերը կը շարունակուին ոյսպէս մինչեւ Ֆ. տառը և ամէն մարդ կրնայ իր տօնուխմբութեան տարեգարձը Տարեցոյցին մէջ գտնել իր անուան սկզբնատարին համապատասխանող դիրք միասուելով:

Յունիսի վերջին օրը 31 Գ. կը հասնինք Վ. տառը:

Ուրեմն Ա. էն մինչեւ Վ. մեր բալոր այր ընթերցող-ներուն մեր բարեմաղթութիւնները կը ներկայացնենք և կ'ըսնենք
— Անունովնիդ ապրիք :

Etablissements Austro-Ottoman

D'ameublements et Tapisserie

(Grand'Rue de Péra No. 320 Ex-Palais de Cristal)

GRANDE EXPOSITION PERMANENTE *

LES VÊTEMENTS TIRING

Habillement comme sur mesure
Solidité, Élégance, Bon Marché

GRANDS MAGASINS TIRING

GALATA

Changement de domicile

LE D^r K. DAMIANIDÈS

Spécialiste pour les maladies des yeux, du nez, des oreilles et de la gorge, qui vient de rentrer de son voyage en Europe, a transféré son domicile et son cabinet médical dans la même maison, Rue Karanfil, No. 115, derrière la station du Tunnel à Péra. 182

Traitemment par méthode anglaise

Consultations de 1 h. à 5 h. p. m.

Chaque jeudi consultations gratuites pour les pauvres.

C. JULIUS CAESAR
ACTUS TERTIUS
SCENAE QUARTA ET QUINTA

ACTUS TERTIUS

SCENA I.

1. ԿԵ. Տօն ամէն այրերու որոնց անունը կը սկսի
Տ. տառով :

ԶՈՂԱԳԻՆ ԱԼՈՒՐԻ

2 ԵՇ. Տօն ամէն այրերու որոնց անունը կը սկսի
Ր. տառով :

Եւ այս այսպէս կը շարունակուի մինչեւ 8 ԳԵ. յո
րում կը տօնուի Ֆ. տառով սկսող այրերու անունները :

ԶՈՒԱՐԵԱԼԻ ԱԼՈՒՐԻ

Յետոյ նոյն դրութեամբ կը սկսին տօնուիլ կիներու
անունները. Օգոստոս Թէն սկսեալ :

Հարկ չի կայ ըսկը որ տօթագին եղանակները բու
լորովին չնջուած են Օգոստոսի մէջ և անոր տեղ ունինք
միշտ զով օդ, անձրեւային պայծառութիւն, զուարք զե
փիւր, և զուարեալի սիւէ: Օգոստոսը մեր Տարեցոյցին
մէջ իր դժոխային վիճակին ելած՝ եղեմական քաղցրու
թիւն մը առած է վրան :

ՄԵՊՏԵՄԲԵՐ

ՕՐ ՅՈ

1. ՇԲ. ՆԵԿԻՈՎ Ս. Ժողովոյն երեք հարիւր ութեւ
տասն հայրապետոց :

2. ԿԻՐ.

Քայց ի՞նչ հարկ այլեւս շարունակելու մեր այս մի-
օրինակ թուռումը : Մեր դրութիւնը արդէն այյեւս ծա-
նօթ է մեր ընթերցողներուն՝ և կրնան իրենք իրենց
շարունակել օրացոյցը մինչեւ Դեկտեմբեր 31:

Քանի մը լրացուցիչ հրահանգներ, և ա՛լ փակնք
այս գլուխը :

Եթէ երբեք կը տեսնէք որ սեպտեմբեր ամիսը շատ
հաճելի կը թուի՝ մի՛ վարանիք զայն երկարելէ, մէկ
երկու շաբաթ փոխ առնելով Հոկտեմբերէն: Մեր տարե-
ցոյցը ներողամիտ բարեացակամութեամբ մը աչք կը գո-
ցէ այս տեսակ քմահաճ փոփոխութիններու, բա՛ւ է որ
ի՞ դրին մէջ ուղղամութիւն և անկեղծութիւն ըլլայ: Ամիսները, շաբաթներն ու օրերը մարդուս համար եղած
են և ո՛չ թէ մարդս ամիսներուն, շաբաթներուն և օ-
րերուն համար: Քայլ մին ալ առաջ երթալով՝ կ'ըսենք
որ եթէ մեր ընթերցողներէն մէկ մասը կը պահանջէ որ
այսինչ օրը կիրակի ըլլայ՝ մինչ մէկ մասն ալ կը նախընտ-
րէ Հինգշաբթին, մինք անպատճութիւն մը չենք տես-
նար երկու ճաշակներն ալ գոհացնելու՝ միեւնոյն օրը թէ՛
կիրակի և թէ Հինգշաբթի ընդունելով: Մարդկային

բնասուր ազատութիւնը պէտք չէ որ կաշկանդուի աւանդամոլ տոմարի մը կապանքներուն մէջ : Բայ իս լաւագոյն է որ բոլոր օրերը ջնջենք՝ քանի թէ ստիպենք մէկը որ այսինչ օրն իրբեւ Զորեքշարթի լնողունի՝ մինչ իր մէջը կ'ուղէ որ Ռւբաթ ըլլայ այդ օրը :

Այս տարի օրացոյ յին մէջ այս մէկ քանի հիմնական փոփոխութիւնները մոցներով՝ կը խոստանանք գալ տարի աւելի արմատական բարեփոխութիւններով օժտեալ Ա. ՊՈՒՇՆԵՐՈՒ ՏԱՐԵՑՈՅՑ մը հրապարակ հանել, օգտուելով միամեայ փորձառութեան մը ատւած դասերէն :

Գալով խուարամիտ սովորամոլ աւանդապաշտներուն՝ գիտենք որ անոնք թունաւորուած մուկի գալարումներով պիտի ճուան մեր այս բանական նորոգութիւններու հանդէս և կառչած պիտի միան ինդու, Դոմիս, Մատրնա, Թեղկիս, Պրիճիթ և Ս. կոյսերուն որմնք առանց այլեւայլի դուրս նետեցէք մեր տարշոյցէն, որովհետեւ Ա.ՊՈՒՇՆԵՐՈՒ ՏԱՐԵՑՈՅՑ միենոյն ատեն կուանաց վանք մը չէ (չգործածելու համար աւելի հում բացատրութիւն մը) :

Այդ յետադիմական պարուները ապահովաբար վետտուած կաչաղակի ճիչեր ալ պիտի արձակեն աւեսնելով ամիսներու մէջ ներմուծուած անհրաժեշտ բարենորոգումները, բայց ի փոխարէն վատահ ենք որ ողջախոհ ու աննախապաշար հայութիւնը քաջալերանքի ու համակրութեան ձևոք պիտի մեկնէ մեզի և այս պիտի ըլլայ առանց արդար պատիժը և մեր ալ անկողոպակնի վարձատրութիւնը :

Ա.ԵՐԶ ԲՈՒԽ ՕՐԱՑՈՅՑԻՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԵՐԵՒԵԼԻ ԴԱՅԻՑ ԵԿ ԱՆՁԱՆՑ

Ի ստեղծմանէ կեղծ հերոսաց ի Կ. Պոլս մինչեւ ցայցմ են աւուրք՝	1215
Ի յայտնութենէ Միհրդատայ Հայկազն ի Թօ- քաթրեան սրճարանի	1181
Ի սկզբանէ ճառախօսական համաձարակին որ ծաւալեցաւ ի մայրաքաղաքս	1150
Ի Գիւտոյ ճուղուպիտութեան յԱրշաւանաց Ասօյի ի Պարտիզակ, յԻզմիտ և ի շր- ջակայս	962
Ի ծաղմանէ ունայնաբան պոռտախօսու- թեանց Հմայեակ Արամեանց ի յազդային ժողովն յԱռաքելութենէ է. Ակնունիի ի Միացեալ Նահանգու	927
Ի ծաղմանէ ունայնաբան պոռտախօսու- թեանց Հմայեակ Արամեանց ի յազդային ժողովն յԱռաքելութենէ է. Ակնունիի ի Միացեալ Նահանգու	891
Ի բացուգոյի խնդրէն	826
Ի գիւտոյ հրաշագործ «Ամրիթա» ի	791
Ի վտարմանէ Հմայեակի Արամեանց ի Ս. Դ. Հնչակեանութենէ որպէս դաւաճան	760
Ի Հաստատմանէ Կօրաչիօ Քարթէրի ի Մէհմէտ Ալի փաշա խան, թիւ 49	741
Ի տեղապահութենէ Արքիկ Մուպահեաճանի յանձին Մանկունի Սրբազնի	314
Ի տեսակցութենէ Միհրդատ Հայկազնի ընդ մեծ Եպարքոս Սայիտ փաշա	216
Ի հրապարակմանէ Ապուչներու տարեցոյցին	42
	1

ՏԱՍԼ ՕՍՄ. ՈՍԿԻՒ
ՊԱՐԳԵՒ ՄԸ

ԱՆՄԻԶԱՊԷՍ ՎՃԱՐԵԼԻ

ԱՊՈՒՇՆԵԲՈՒ ՏԱՐԵՑՈՅՑ/ն հրատարակիչը
յանձնառու կ'ըլլայ անմիջապէս տառը 0սմ. ոսկի վճա-
րելու այն ընթերցողին որ սոյն տարեցոյցը ուշի ուշով
կարդալէ ետքը, ԱՌԵԼԵԱԹՆ շընդունիր թէ՝ լաւագոյն
ու կատարելագոյն տարեցոյցն է այս մինչեւ հիմա հրա-
տարակուածներուն մէջ :

Այս պարգեւը տրամադրելի է մինչեւ Յունուար
մէկ:

ԱՄՈՒԽՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԳՐԻՑ

ՏԻՐԱՆ Ա.ՍՏՈՒ.Ա.ԹՈ.Ա.ՏՈՒՐ

Ա.

Այդ տէքամէրօնեան պատմութիւնը զիս չա՛տ խըն-
դացուցած է: Չեմ զիանը ո՛ւր կարդացեր եմ: Ամէն
առեն կը լիշեմ, երբ ամուսնութեան վրայ խօսին քովս:
Գիւղին մէջ հարսնիք:

Աննա և Սիմօն կ'ամուսնանան:

Մինչեւ իրենց մազերուն ծայրը կոյս՝ երկուքն ալ:
Կոյս մը՝ կին պիտի ըլլար:

Այս եղելութիւնը կարգ մը չարաձնի երիտասարդ-
ներուն և աղջիկներուն երեւակայութիւնը հեշտազրդը ու-
որէն կը խաղաղութիւր: Երիտասարդներուն՝ որովհետեւ զի-
տեին, աղջիկներուն՝ որովհետեւ պիտի ուզեկին զիտնալ:

Աննա հրաշագեղ հրապոյրներով օծուն արարած
մըն էր, միամիտ, երկշուռ:

Սիմօն՝ վարդագոյն գէմքով, կոշտ, տղէտ երիտա-
սարդ մը:

Իրենց երկուքն զիտութեան սահմանները չափա-
զանց անձակ էին, ինչպէս ընդհանրապէս բոլոր գեղա-
զիներունը:

Աննա՝ իր մարմինով՝ նախանձը պիտի զրդուէր էտիթ
Ուէմինէի կամ Սլիքս Էմօնտի, եթէ պատահումով անոնց
հետ միասին լոգանքի համար ծով մտած բլլար, ուր ան-
շաղտնապահորէն թափանցիկ ջաւրին ալիքները իր մարմ-
նական զիծերուն թաքուն ներդաշնակութիւնը պիտի

շեշտէին, և իր ձիւնաթոյը կուրծքերուն ծայրը փիթթող ամբիծ վարդագեղ հաղարջները պիտի ցողավէտէին:

Մատով ցոյց արուելիք գեղեցկութեան գլուխ գործոց մը, որուն տակաւին ուրիշ ուեէ օտար մատ չէր հըպած . . . հեղինակին ստեղծագործող մատներուն հպումէն եռքը:

Սիմօն՝ կանուխէն որբ մնալով՝ հօրաքրոջ մը կրօնաւկան դաստիարակութիւնով մնեցած էր, աշխարհին և իրերուն անտարբերութեանը մէջ: Ոչ մէկ կիրք իր զգայնութիւնները վիթքած, ո՞չ մէկ տենչանք իր հոգին պղծած էր:

Հիմակ ալ այդ տունը մնացած հօրաքրոյը զինքը կ'ամուսնացնէր գիւղին ամենէն ազուոր աղջկանը հետ:

Սիմօն՝ հակառակ իր միամտութեանը, իր կնոջը գեղեցկագիտական կատարելութիւնը չգնահատելու աստիճան կոյր չէր: Անօրինակ յուղում մը կ'զգար անոր դէմքը գիտած ատեն: Նայուածքը կարմրած երկաթի մը պէս կը պարաէր իր շրթաւնքներուն վրայ: Թող որ արդէն, եթէ նոյնիսկ իրեն համար աղուորը տգեղէն զանազանել դիւրին չըլլար, նորէն Աննացին ազուորութիւնը իննդրական չէր կրնար ըլլալ, քանի որ աղայութենէն ի վեր աւմէն օր, «Փաղեցիկ Աննա» կոչուիը կ'իմանար գիւղին մէջ, ամէնուն կողմէ:

Հանդէսին չնորհը, փայլը, աղմուկը, հանդիսաւոր երեւոյթը իր վրայ աղդած էին:

Միաքին մէջէն հաշմու կ'ընէր որ այդ աղմուկը, ժխուրը, նուազը մինչեւ ետքը չէին կրնար տեսել: Հրաւիրուածներուն մնկնելէն ետքը . . . ի՞նչ պիտի ըլլար: Մինակ պուալու, կանչելու, պարելու համար եղած չէր անշուշտ ամուսնութիւն ըսուածք: Ծայրը բան մը ըլլալու էր . . . բայց ի՞նչ . մտածելու ժամանակ չունէր դժբաղդաբար:

Սենեակ մտաւ: Գլուխը ձեռքերուն մէջ առնելով, հազիւ ինքոյնքը յանձներ էր մտածումի հոսանքին, երբ հարսը ներս մտաւ:

— Ե՞ն, Սիմօն, բուաւ, ո՞րքան կարմրած ես:

— Այո՛, . . . շատ պարեցի:

Լուլթիւն:

— Ժամի տասնըմէկն է կարծեմ:

— Անցած է, օրիո՞րդ, անցած:

— Ժամի ձիշտ տասնըմէկը քսանըհինդ անցած է:

Հարսը կը խնդար սիրօքէն:

— Սիրելի՛ Սիմօնս:

— Սիրելի . . . օրիո՞րդ:

— Ասկից ետքը պէտք չէ որ զիս օրիորդ անուանես: Ա՛լ ամուսնացած ենք: Կին եմ հիմակ, անանկ չէ:

— Իրաւ . . . բերնի վարժութիւն, կը ներես: . . . Անշուշտ կին ըլլալու ես հիմա, քանի որ պատկուեցանք: Խնչ հրաշտի խորհուրդներ ունի եկեղեցին, իր ամենաւուրբ ծոցին մէջ աղջիկ մը կ'երթայ կին կ'ըլլայ:

Աննու աւելի մօտեցաւ Սիմօնին. իր շարժումին մէջ դնելով զգուշաւոր փայտայնքի մը բովանդակ կ խանդը:

— Մինակ պիտի մնանք քիչ մը ետքը:

Երկուքն ալ կարմրեցան, ու գլուխինին հակեցին:

Ամուսնին երկըսութեանը կարեւորութիւն չտալով, Աննա իր ձեռքերը երկարեց:

— Զիս պլափ սիրե՞ս միշտ:

— Ե՞ն, յաւիտենապէս, չէ՞ որ ամենասուրբ տաճարին առջեւ ըւխտեցի:

Ու ծաեցաւ, համբուրելու համար . . .

Առնաձայն մը:

Երիտասարդ մը ներս կը խուժէր:

— Բանեցի՛ ձեզի . . . ի՞նչ կ'ընէրք հոս:

— Դուն ես, Լեւոն, ըստ Սիմօն :

Հարսի փախած էր :

Լեւոն՝ Սիմօնի պղտիկութեան ընկերն էր որ Պոլիս ուսանող էր և որ իր հին ընկերոջը ամուսնութեան ներկայ ըլլալու համար եղեր եկեր էր : Հեռու է հեռու սիրած էին միշտ զիրար :

— Անման անկիւնները կը քաշես, կեցի՛ր դուն . անհամբերութիւնդ կը հասկնամ . ատանկ հրաշալի աղջկան մը հրապոյրներուն ո՞վ կրնայ գիւղաղբել : Զա՛ր սատանայ . . . ի՞նչ աչքեր, ի՞նչ ձեւ : Անմա գիւղին ամենէն գեղ զեցիկ աղջկին է :

— Բայց ներողութիւն . . . Անմային տիկին բառն աւելի չպիտի՞ յարմարէր այլեւս :

— Կարծեմ դեռ ո՛չ բոլորովին, ըստ Լեւոն, հեղնական ժամանակ մը :

Սիմօն ընկերոջը պատասկան շեշտէն հմայուած և ի՞նքն ալ այդ տօնով պատասխանած ըլլալու համար, յարեց .

— Կարծեմ բոլորովին այս' . . .

Լեւոն չարաճձի պղտիկ ապատակ մը իջեցուց ընկերոջը երեսին և պոռաց աշխատավ .

— Ի՞նչպէ՞ս, ի՞նչպէ՞ս, օ՛ . . . բացատրէ՛ տեսնեմ, անսառակ, երբէ՞ն ի վեր :

Սիմօն շուարեցաւ :

— Բայց . . . բայց . . . չէ՞ որ այս աստու եկեղեցին մեկ պատկեց, չէ՞ որ պատկի խորհուրդը աղջիկները կնոջ փոխելու հրաշալի ուժը ունի . . . Բայց ի՞նչ կայ որ ատանկ զարմանքով երես կը նայիս, այնքան տարօրինակ բա՞ն մըն է արդեօք ըսածս :

— Զէ՛, ամենեին, միայն ես կը կարծէի թէ լոկ քահանային աղօթքը չբաւէր այդ փոփոխութիւնը կատարեալ լնելու համար .

— Հաղա՞ . . .

— Հապա ամուսինն ալ սրբազան պարտականութիւն մը ունի :

Յանկարծ Սիմօնի գոյնը նետեց :

Բան մը կար այս գործին տակը :

— Ի՞նչ ունիս, հարցուց Լեւոն :

— Բան մը պիտի խնդրեմ քենէ :

— Խնդրէ՛ :

— Հոս չլլ՛որ :

— Ի՞նչո՞ւ համար :

— Չըլլար, պարտէղ երթանք :

Մութ էր . ծառերը իրենց սօսակւնովը լռութիւն կ'աղմէին :

— Ի՞նչ կայ, հարցուց Լեւոն, ըսէ՛ :

— Պիտի ծաղրես զիս :

— Խենթ ես ի՞նչ ես . ի՞նչ պէտք ունիս ատանկ գաղափար մը միտքէդ անցընելու :

— Գիտես որ այս առառւ ամուսնացայ :

— Հասկցա՞նք . ամէն մարդու գիխուն կուգայ այդ փորձանքը . . . ներողութիւն . . . յետո՞յ . . .

— Սուաջին անգամն է որ . . .

— Ա՛տ ալ գիտէի :

— Կ'ենթագրեմ որ ամուսնութեան մէջ ինծի մութ մեացած, անձանօթ եղող կէտ մը կայ :

— Ի՞նչ անսակէտավ :

— Ամուսնական պարտականութեան անսակէտավ :

— Այսինքն . . . միտքդ բացատրէ՛ : Ի՞նչ բան քեզի կը շփոխեցնէ :

— Էսի արդէն, ամուսնական պարտականութիւն ըսուածը :

— Ատոր մէջ ի՞նչ կայ շփոխեցնող, պարտականութիւնդ կը կատարես կ'երթայ :

— Այո՛, բայց ատիկա ընելու համար նախապէս անհրաժեշտ է որ այդ պարտականութեան ինչի՞ մէջ կայտնալը հասկնամ, անանկ չէ ...

— Հա՛ ... ըսել է տակաւին մինչև հիմա չե՞ս հասկցած ատիկա:

— Չէ՛ ...

— Կեցե՞ս :

— Ի՞նչ կ'ըլլայ որ : Մէկ երկու անգամ ասոր անոր սամկ մը խօսքը ըրի, հոնտեղուանքը չեղան . այն ատիկ հասկցայ որ ատիկա ամէն մարդու հարցնելիք բան մը չէ և սպասեցի քեզի : Երկու բառով բացատրէ՛ իմդիրը ինձի . կը յուամ որ ժամանակը անցած չէ այդ մասին :

Լեռն, հետզհետէ աւելի զարմանքով ուսերը թօթուելով :

— Ոչ, ոչ, մի՛ վախճար : Հիմա պարտականութիւնդ կ'ըսեմ քեզի :

Սիմօն ձեռքը ճակատին տարաւ :

— Գիտեմ . այս իրիկուն աներ պապաս ալ կ'ըսէր որ մեծ հայր ըլլալու փափաք ունի :

— Ահաւասի՛կ ամէն բան . . . զաւակներ շինէ՛ :

— Ուզածս ալ ա՛տ է արդէն, յարեց Սիմօն, զաւեշտական յուսահատութիւնով մը : Միայն, կարծեմթէ գուն Ամսային պարտականութիւնը իմնիւս հետ կը շփոթեա, բարեկա՞մս : Ատիկա, որքան որ գիտեմ, կիներու յատուկ բան մըն է, այդ գործին ինձի հետ ունեցող առընչութիւնը շատ շատ ծնելէն ետքը կրնայ ըլլալ և ասոր ալ ժամանակ կայ դեռ, փառք Աստուծոյ : Որովհետեւ չեմ իմացած բնաւ որ կին մը պատկէն առնուազն տարի մը առաջ զաւակ բերէ : Ես ալ կը վախճայի թէ անմիտ զաւական պարտականութիւն մը ունիմ որուն մասին գաղափար չունէի :

Ա՛հ, շնորհակալ եմ որ սիրտս համդատութեցիր :

— Զարժե՛ր, չարժե՛ր . . .

Այս անակնկալ յայտարարութիւնը լեւոնի հետաքըրքը քրութիւնը մորակելու ծառայեց . հասկցաւ որ զիմացինը իր տաններկու տաններկք տարի առաջուան ճանչցած Սիմօնն է ատկաւին : Զէ փոխուած բնաւ :

— Էսել է հիմակուց մասնակցութիւն չես ուզեր ունենալ զաւակներու գործին :

— Երբե՛ք . ինչո՞ւս պէտք :

— Սիմօն, քեզի քանի մը բաններ պիտի հարցնեմ, պատասխանէ՛ :

— Սիրով :

— Գուն սիրունի չե՞ս ունեցած :

— Քանի որ կ'ըսեմ քեզի թէ առաջին անգամ . . .

— Պոլիս չե՞ս գացած դուն :

— Շա՛տ անգամներ զացած եմ Պոլիս հօրաքրոջս հետ :

— Հօրաքրո՞ջ հետ . . . : Թատրոն գացե՞ր ես :

— Ո՛չ :

— Զբոսավա՞յր :

— Ո՛չ :

— Վէպ կարդացե՞ր ես :

— Հօրաքրոջս ընտրած գիրքերը կարդացեր եմ :

— Կեանքիդ մէջ աղջկան հետ սիրոյ վրայ խօսած չե՞ս :

— Երբե՛ք :

— Բարեկամ մը քեզի բացատրած չէ այս պարագան :

— Ո՛չ : Մնաց որ հօրաքրոյս չէր ձգեր որ ուրիշներու հետ տեսնուիմ . իր հետ միայն գուրս կ'ելլէի :

— Զոյդ մը գեղձանի՞կ ալ չունէիք հօրաքրոջդ տունը :

— Դէղձանի՞կ, չէ՛, ջորի մը ունեխնք լոկ։
 — Սասուած վկայ, սիրելի՛ս, հօրաքոյրդ իր տեսաւ-
 կին մէջ հանձարեղ կնիկ մըն է եղեր։
 — Ո՞հ, տառը կասկած չկայ։
 — Քանի տարեկան ես կարծեմ։
 — Երկու ամիս տւելի։
 — Շա՛տ աղեկ, ես քեզի դաս տալու պիտի սկսիմ
 սակից ետքը։ Մափ'կ ըրէ։
 Ու իր բարեկամին միամտութիւնը շահագործելով։
 — Սիրելի՛ս, գիտես անշուշտ թէ մարդկութիւնը
 երկու որոշ սեռերու կը բաժնուի. այր և կին։
 — Անչուշտ։
 — Զգիտացածդ սա է թէ այրերն ալ իրենց կարգին
 երկու ստորաբաժնութիւնը կը բազկանան։ Այսինքն
 Զեզոյներ և Ներգործականներ, Ժխտականներ և Գրա-
 կաններ։
 — Ներգործականներ՝ որոնց բեղմաւորով ա-
 նունն ալ կուտան երբեմն՝ կը ծառային մարդկային տեշ
 սակը բազմացնելու. կը մեռնի՞ս: Ժխտականները կամ Զեզոյ-
 ները, ընդհակառակը, չոնին իրենց մէջ բոլոր այն
 կարեւոր յատկութիւնները որոնք . . .
 — Բայց իմ զիտցածս սա էր թէ մարդկային ցեղին
 առ Ներգործական բառած մասը կիններու յատուկ բան
 մըն է . . .
 — Չէ՛, բարեկամս, կիններունը տւելի Կրաւորական
 կը կոչուի։
 Սիմօն բան մը չէր հասկար ամիննեին այս յայտնու-
 թիւններէն՝ որոնք Յովհաննու յայտնութեան չափ կը նա-
 ռու էին իրեն համար։
 — Շա՛տ տարօրինակ բան։
 — Բնութիւնը այս տեսակ տարօրինակ գաղտնիք-
 ներով լեցուն է, բարեկամա։

— Կ'ըսն'ս ինծի թէ ես ո՞ր ստորաբաժնութիւն կը
 պատկանիմ։
 — Զգիտցա՞ր տակաւին. չեզոք մըն ես դուն։
 — Ինչէ՞ն յայտնի է։
 — Բայց դուն չըսի՞ր որ Աննային զաւակ ունենալու
 խնդիրին չես ուզեր միջամտել, առ կ'ապացուցանէ թէ
 դուն չեզոք ես։
 — Բայց ինչպէ՞ս կրնամ միջամտել։
 — Այս՛, ճիշտ առ է, եթէ ներդործական ըլլայիր,
 այն տաեն կը համկայիր. բայց յայտնի բան է որ չեզոք
 ես, անանկ շինուեր ես։
 — Հը . . . Այդ պարագային ինչո՞ւ ուրեմն ամուս-
 նացաւցին զիս, պատասխանեց Սիմօն, ամբողջ մարմինովը
 գալարուելով և լալու պատրաստութիւն մը տեսնելով
 դէմքին վրայ։
 — Ի՞նչ կայ . . .
 — Քանի որ չեզոք եմ եղեր, իրաւ այդպէս կ'երե-
 ւայ։
 — Աս ինդիր չէ, մամնաւոր օգնուկաններ կան ա-
 ստոր համար, սիրելի՛ս։
 — Օգնականներ։
 — Օգնականներ, այս՛, փսխանորդներ, որոնք պղտիկ
 փոխարինութիւնով մը ամուսնական պարտականութիւն-
 ները կը զիւրացնեն։
 — Տես, առ առ . . . ինչեր ալ կան եղեր։
 — Բայց անոնք ի՞նչ պիտի ընեն զաւակի ինդիրին
 մէջ . . .
 — Փափուկ ու միեւնոյն տաեն կնճռոտ գործ մը .
 ինդիրը ներդործականին՝ կրաւորականներու հետ մինակ
 միալու վրայ է։
 — Ո՞հ, օ՞հ, իրա՛ւ կնճռոտ է։

— Հիմա կը տեսնե՞ս թէ ո՞րքան դժուար խնդիր է
չնորհքով օգնականի մը ընտրութիւնը :

— Կը տեսնեմ:

— Դժուար է զարդացած, երիտասարդ, հարսին հա-
ճոյալի երեւցող մարդ մը գտնելը . մէկը, որ ծանօթ ըլ-
լայ, որ բարեկամ ըլլայ վերջապէս :

— Ասանկ բաներ չէի գիտեր . ա՛խ, Աստուած իմ,
սս ի՞նչ փորձանք էր որ եկաւ զլիսուս . ի՞նչ ընելու եմ
հիմա :

— Դժուար է . այսքան մտերմական պաշտօն մը տ-
մէն մարդու չյանձնուիր :

Լեռն գերմարդկային ճիղեր կ'ընէր ինքնից ը բըռ-
նելու համար :

— Աւքենին այս պարագան կերպով մը հասկցնելու
եք Սննայի և ետքը միասին օգնական մը գտնելու վրայ
կը խորհինք : Չըլլար :

— Խե՞նդ ես բարեկամս պսակին ուժը անցնելէն
ետքը Ամերիկային օգնական բերես օգուտ չունի . երկա-
թը տաք տաք կը ծեծեն : Այս իրիկուն իսկ օգնականդ
ներկայացնելու ես կնոջդ, եթէ ոչ ամէն բան կորսուած է:

Երկար լուսութիւն մը, որուն միջոցին Սիմօն մատամոր
պկառ պարտի անեակին մէջ և յետոյ կանդ առաւ ու-
յանկարծ հարցուց Սիմօնին .

— Դուն ներգործական ես :

— Սոսկախ կերպով, սոսկալի կերպով, չորս հինգ
տուներու մէջ օգնականի պաշտօն վարսած եմ, և կը հա-
մարձակիմ ըսելու թէ ամէնքն ալ զոհ մնացած են ինձմէ :

— Այս առեն գրկուած եմ:

— Ի՞նչպէս :

— Ա՛հ, սիրելի՝ Լեռնա, գործս կարդաղրէ՛, իմ օգ-
նականս եղի՛ր :

— Բայց ...

— Կ'աղաչիմ:

— Շա՛տ դործ ունիմ, զլուիս քերելու ատեն չկայ :

— Իմ լաւագոյն բարեկամս ես դուն, եթէ զիս այս
վիճակին մէջ ձգած մեկնիս, որո՞ւ կրնամ զիմել :

— ? ? ?

— Զէ, անպատճառ այս ծառայութիւնը պէտք է որ
մատուցանես ինձի, ուրիշ կերպ չըլլար : Վստահ եղիր որ
մինչև կեանքիս վերջը չեմ մոռնար լնելիքդ :

— Այդ մասին վստահ եմ արդէն : Բայց ...

— Բայց մայց չիկայ, պիտի ընդունիս :

— Շա՛տ աղէկ, ինչպէս կարելի է քեզի մերժել :

— Օ՛հ, չնորհակալ եմ: Ազնիւ ըլլալուդ վրայ չէի
տարակուած:

— Մինակ թէ ո՞չ մէկուն ըսելու ես . խոստացի՛ր ...

Կթէ ոչ ...

— Կ'երդնում:

— Թէկ շատ ընտանիքներ իրենց մէջ կը պահեն օգ-
նական մը, սակայն անցարմար է տարածայնելը :

— Գաղտնապահութեանս վրայ կրնա՛ս վստահ ըլլալ :

¤.

Այդ պահուն ձայներ լսուեցան:

— Հրաւիրեալները կը մեկնին կոր, ըստու Լեռնա,
գնա՛ ձամբէ մարդիկը :

Երբ Լեռնէն զատ ամէնքն ալ մեկնեցան .

— Բարեկամդ հո՞մ պիտի մնայ հարցուց Սննա, երկ-
չոտ հետաքրքրութիւնով մը :

— Այդ սքանչելի տղան չուզէր մեզմէ բաժնուիլ:

ահն, սիրելի՛ Սմբառ, եթէ զիտնայիր թէ ի՞նչ անձնուէր,
ի՞նչ պաշտելի բարեկամ մըն է :

Յետոյ կտմաց մը կնոջը մօտենալով .

— Ի՞նչպէս կը գտնես դայն :

— Սիրուն տղայ է :

— Հաւնեցա՞ր, շխտա՛կըսէ :

— Այս՛, շա՞տ աղէկ կը պարէ, յետոյ բարեկամդ է... :

— Այն ատեն ամէն բան կարգադրուած է, գոչեց

Սիմօն ուրախութենէն գդլիսած :

— Ի՞նչ բան :

— Որովհետեւ աղէկ չպիտի ըլլար եթէ չհաւնէիր աւ-
նոր, այն պաշտօնին համար, զոր ընդունել տուի :

— Ի՞նչ պաշտօն :

Սիմօն ժատելով, ու կնոջը ականջէն վար .

— Ներգործականն է, ներգործականը ...

— Ի՞նչ ըսիր :

— Օդնականն է, ըսել կ'ուղեմ, օգնակա՞նը :

— Օդնակա՞նը, կրկնեց Սմբառ աչքերը բացած զար-
մանքով :

— Բայց եկո՛ւր, սիրելիս, եկո՛ւր, կը տեսնեմ որ դուն
ալ ինձի պէս զադափար չունիս . ինք աւելի աղէկ պիտի
բացարէ քեզի տափկա, ի՞նչպէս որ ինձի բացարէց :

Երեքր միտոյն երկարօրէն . վիճարանեցան սենեա-
կին մէջ : Սմբառ չէր ուզեր տեղի տալ, կը վախճառար : Զէր
կրնար ըմբռնել mariage à troisի քմայական վարդաւ-
պեառութիւնը, և միշտ կ'ընկրկէր, մինչգեռ Սիմօն, աշ-
խարհիս ամենէն ապուշ արարածը, պտուզներու երախայ-
րիքին անուշութեան զաղափարը չունենալով, գլուխովը
շարժումներ կ'ընէր կինը համոզելու համար :

Սմբառ կը մաքառէր, բայց հսազանդութիւն չէր խոս-
տացած քահանային առջև . այսօրուընէ պիտի թերանա՞ր

իր կնոջական պարտականութեանը մէջ : Իրաւունք ու-
նէր այդ օդնականին միջնորդութիւնը մերժելու :

Իրաւ է որ Սիմօնի ներգործական մը չըլլալը դրժ-
բաղդութիւն մըն էր, բայց ի՞նչ օդուտ :

Եւ Սիմօն, անհամիեր, սրանեղ, բարկացած, երկու-
քը մինակ ձգելով, քովի սենեակը առանձնացաւ, մինչեւ
առառու հայնոյելով բախտին դէմ'որ զինքը չեղոք առեղծած
էր :

Առառուն, Սիմօն իր բարեկամին ձեռքերը սեղմեց
ջերմագին — մինչդեռ հարսը դեռ կը խոկար — ու շնոր-
հակալութիւն յայտնեց իր ազնուաւթեան համար : Լեւոն
յարեց թէ իրեն համար վարձատրութեան լսւագոյն ձեն
էր գործին գաղանի մնալը և այդ մասին բացարձակ վրա-
առհութիւն գոյացնելէ ետքը մեկնեցաւ :

Օր մը ետքը, մութնուլուսոււն, Լեւոն, իր ամուրիի
սենեակին, պազ ու չոր անկողինին խորը, նախորդ օր-
ուսն հեշտանքներուն երազներով օրօրուած քնանալու
վրայ էր գեռ, երբ սենեակին գուռը բացուեցաւ աղմու-
կով և Սիմօն ներս խոյացաւ փոթորիկի մը պէս : Լեւոն,
յանկարծ արթննալով, վախցաւ թէ գործը դէշ հանգա-
մանք մը ստացած չըլլայ և պատրաստուեցաւ օճառէն ու
ջուրէն առաջ, լուսանքներու տարափ մը ընդունելու
երեսին :

— Լեւոն, գիտե՞ս ի՞նչ ըսելու եկայ քեզի ...

— Ի՞նչ ...

— Զէս կրնար գուշակել :

— Ի՞նչպէս գուշակեմ ...

— Առջի օր գուն վրաս ինդացիր, բայց ...

— Ի՞նչ կայ օր ...

Խորհրդաւոր ձեւով մը .

— Հիմա պիտի հասկնաս որ այնքան ալ վրան խըն-
դպիք մէկը չեմ եղեր :

Գործը գէշ գարձուածք մը կ'առնէր կամաց կամաց ։
Լեւոն խոհեմութիւն սեպեց պաշտպանողական զիրք բռնել։
— Սակայն եռ կը կարծէի թէ . . .

— Դուն կը կարծէիր որ ևս օգնականի պէտք ունիմ,
հէ . . . հիմա կարգը ինձի եկած է քու միամառնթեանդ
վրայ ինդալու։

Լեւոն ճշմարատպէս շփոթած էր, եթէ խաղը իրա-
պէս երեւան ելած ըլլար, խնդալէ աւելի տարբեր բաներ
ընելու էր Սիմօն։

— Զեմ' հասկնար կոր, բարեկա՛մս . . .

— Զես հասկնար, անշուշտ չես հասկնար, հիմա պի-
տի հասկնաս երեւակայէ՛, բարեկա՛մս, երեւակայէ՛ որ եր-
կուքնիս առելիօրէն խարուեր ենք, կարծելով թէ ես
չեղոք մըն եմ, մինչդեռ ես քեզմէ աւելի կատարեալ
ներգործական մըն եմ եղեր, հո՛ . . . հա՛ . . . հա՛ . . . մըտ-
քէր կ'անցնէ՞ր։

— Ա՞զ ըրաւ այդ գիւտը։

— Աննան, այս դիշեր իսկ։ Ա՛հ, մանաւանդ հիմա
չնորհակալ եմ, բարեկա՛մս, որովհետեւ հասկցայ որ հրա-
շալի բան է եղեր ներգործական ըլլալը, և երեւակայէ՛ որ
եթէ դուն չըլլայիր, անշուշտ Աննան երբեք փորձառու-
թիւնը չպիտի ունենար իմ ներգործական ըլլալս երեւան
հանելու և մինչեւ վերջը չեղոք պիտի կարծէի ինքզինքս
. . . ապուշի պէս, կատարեալ տպուշի մը պէս. և այն
առեն ամէն մարդ իրաւոնք պիտի ունենար վրաս իրն-
դալու։

— Մինչդեռ հիմա . . .

— Ա՛հ, հիմա, ես պիտի խնդամ բոլոր զիս չեղոք
կարծողներուն վրայ, քու շնորհիւդ։ Մինչև վերջը ե-
րախտագէտ եմ քեղի . . .

ՏԵՐՊԵՏԵՐԻՆ ԵՐԱԶԸ

ԵՐԿՈՒ Ա.ՊՈԽԵ ԵՒ ՄԷԿԱ Գ.ԻՒՆՈՎ

ԴՐԵՅ ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻՒ (*)

Այս իրիկունը Հայր Աբգար Մարթավալեան, անձայն,
անձուն, ներս մտաւ իր բնակարանէն։ Քոյրը, Օր. Ե-
ռուսնդիկ Մարթավալեան, — նիհար ու նրբակազմ փատ-
ցած աղջիկ մը, — երկու վայրկեան վերջը արդէն իսկ
իր սովորական սեղը անցեր էր բազմոցին անկիւնը ու
վերստին կը քաղէր իր աղօթարանը։ Հայր Աբգար կօշիկ-
ները հանեց, հասակը տատանեցնելով յամրաբար ներս
մտաւ սենեակէն, ուժգին մը հաղայ, քիշախտին տուփը
քովը առաւ, ու բազմոցին վրայ երկարելով վերարկուին
ներքին գրավանէն Մէնմուայի Ախալարի վերջին թիւը հա-
նեց և սկսաւ կարդալ « քիլսէ չօպանլարըն վազիթէսի
նէ տիր » վերնազրով գրութիւնը։ Բայ սովորութեան
իրարու նրես չնայեցան բնաւ։ Այս անդամնոյնիսկ բարե-
մը չփոխանակուեցաւ իրենց միջև։

Օր. Եռուսնդիկ ոցդ իրիկունը աչքերով միայն կ'աղօ-
թէր, ուզելը յանկացուցած ըլլալով աւելի կարեւոր
զրալուններու, որպիսին են օրինակի համար, իր մեռած
ծնողքը, վազամեռիկ եղբայրը, Հապէշիստան մեկնող իր
միակ եղբօրորդին, թաղին մէջ խօսուած, բանբասանքի
նիւթ եղած անպատշաճ դէպքեր ևայլն, ևայլն։

Հայր Աբգար անգամ մը դէպ ի փողոց գարձուց իր
ակնարկը։ Օր. Եռուսնդիկ կրկնեց նոյն շարժումը կապիկ
մը հետեւողութեամբ։ Աբգէն հետեւողութիւնը իր հին-
առողութիւնն էր։

(*)Գլոբգծեան

Վարէն մէկը վեր ելելու վրայ էր : Գլուխը Ափրիկէի և Հնդկաստանի եւրոպացիներուն մէջ գործածական եղող, գորչագոյն, գմբեթաձև և ծայրերը վար գործած անդշիւական գլխարկ մը կար : Դէմքը չէր երեւեր լաւ մը, բայց կրնար կուհուիլ թէ բաւական ժամանակ մը սպիտակ մնալէ վերջ ակամայ սեցած էր :

Հոյր Աբդարի ակնարկները Մենմուայի Ախալարին վերադառնալու վրայ էին, երբ Օր, Եռանդիկ ջզային անբացատրելի ձգտում մը ունեցաւ և ճիշ մը արձակեց :

— Տրդա՞տ, պոռաց ան հարցական և աղերսարկու շեշտով մը :

Կրօնաւորը բան մը չկրցաւ հասկնալ ատկէ և անդամ մըն ալ հաղաց :

Հօն, փողոցին մէջ, մարդը կը տատանէր աւելի քան թէ կը քալէր :

Այդ մարդը Տէրպէտէրն էր :

Դլխարկին տակէն ծուռ ծուռ նաղեցաւ ան և յետոյ, ինքզինքին գալու ձեւով մը .

— Հա՛, պոռաց :

Օր, Եռանդիկի դէմքը ճառագայթեցաւ, մէկէն ողեւորուեցաւ և խանդոս ու յուղումնալից ձեւով մը .

— Տրդամն է, Ազրարիկ, ըսաւ, Տրդամն է, համակ չեկա՛ւ չեկա՛ւ, ինքը եկաւ :

Կայծակի արագութեամբ վաղեց ու մէկ թափով դուռը բանալով .

— Զիգա՞ն, չիգա՞ն, ակսաւ պօռալ առանց նոյնիսկ ուշադրութեան առնելու թէ ի՞նչպէս պէտք էր շարժիլ այդ օրինակ պարագաներու մէջ :

Մարդը անգամ մը ևս տատանեցաւ ու յետոյ յանկարծական ուստիսմբ մը ինքզինքը Օր, Եռանդիկի դէմք դտաւ :

Նախ վարանեցաւ թէն, բայց շուտով քաջակերուեցաւ իր առած առաջին քաղէն և մանաւանդ Օր, Եռանդիկի աղապատամնքէն :

Եւ փաթառեցան իրարու :

Երբ Հացը Աբդար անենակին դուրս ելու, անձանօթ Տէրպէտէր անցագօրէն ու անստամբար տակաւին կը շարունակէր համբուրել իր քոյրը :

Կղերտկոմը չի գայթակիցաւ թէն, բայց իր քրոջ ցոյց առած չտիգազնոյ եռանդը, հակաղեց իր զզալիք եռանդին և հակաւակ անոր որ տրամադրի էր ուրախանակուած ու ե է ցոյց չըրաւ ուրախաթեան՝ և զարմոցած ու յուղուած կեցաւ քոյնարի :

Օր, Եռանդիկի հարցումներու երկար շարքով մը կողազէր իր եղբօրորդին : Ան նախ անորու, յետոյ անփառաս, իսկ աւելի վերջը ափեզ ցիկեզ և անսեղի պատասխաններ ակսաւ առաջ բարկութեան և խանկազառանքի մէջ և տատանող անորու կացութեան մը մատնելով իր հօրեւլբարին ու հօրաքրոջը : Անսորասելի յուսովիաբութիւն մը, վերջապէս :

Իր արագութեամ շոնչը թթուած գինիի բարի հասով մը կը լիցնէր արածը, որ սակայն անհամար կը մնար իր հօրեւլբարումն ու հօրաքրոջմէն :

Երթալով տատանումները շատցան : Քանի կը տատաներ այնքան ձայնը ելեւէջներ կ'առանար : Երբնմի անիմանալի բառեր կը մրմուր, իսկ երբեմն ալ հակացի մը ովէս կը պօսար ու կը ֆշար :

Ինեղնէրը ովչ գլուխնին Աւեսարանի տակ դրեր էին :

— Տիս՛, ահս, կ'լսէր, Օր, Եռանդիկ, ի՞նչքան փոխարեւ է, սեցեր է, սեցեր, այլակերպեր է :

Ու աչքերը արցունքով կը լինացին :

Այդ միջոցին էր որ քոմի մտերիմ դրացիներէն Ան-

նիկ հանրմ, կամացուկ մը դռնէն ներս սպրդեցաւ.
— Ինչ կայ կը պօռա՞ք, հարցուց ան, կանացի հետաքրքիր ու խուզարկու ակնարկով մը:

Ու սկսան պատմել իրեն թէ ինչպէս իրենց Տրդատը, տարիներէ ետքը վերադարձեր էր, այս տեսակ աներնեւաւ կայելի գինով վիճակի մը մէջ:

— Բան չիկայ, մի վախնա՞ք, ըստ Աննիկ հանրմ, իր քաջ ու քաջալերիչ շեշտովք, վեր տարէք լաւ մը պառկեցուցէք, վերմակը ծածկեցէք, վաղը առտու կը տեսնուիք:

Հակառակ կրկնակի համոզումներու մեր մարդուկը վեր չէր ելլեր ու պատին կը գարնուէր, շմորուն ու զառնացալին վիճակի մը մէջ: Աննիկ հանրմ ստիպուեցաւ միջամտել:

Մէկ թևէն անցնելով իր բազուկը, միւսն ալ տալով Հայր Աբգարին սկսան դէպի սանդուխները քաշկատել մեր ընդդիմացող պարոնը, որ պողպատի պէս կը կախուէր ու վեր չէր ելլեր: Հաղիւ մինչեւ սանդուխի երկրորդ աստիճանը բարձրացուցած էին երբ ան ազատեց իր մէկ թեւը և կրօնաւորին մօրուքէն քաշելով.

— Մրուխ, հաճի աղա, մրուխ, սկսաւ աղաղակել ու գոռալ անսատնի պէս:

Բարեբախտարար այս ծիծաղելի վիճակը շատ չի տեսեց, որովհետեւ քնատ էր ինքը: Երկրորդ յարկին վրայ ևս քիչ մը ընդդիմութենէ վերջ շուտով սենեակ մը առ ռաջնորդեցին զայն, մեծ դժուարութեամբ բաճկրնակը հանեցին, նետեցին անկողին և վերմակով վրան լաւ մը ծածկեցին:

Տեսնելու բան էր առ հրէշը, որ խոզի մը պէս երեսը կը տապատեէր, կը ֆշար, կը խորթար, անկողնին մէջ ինքն իր վրայ կը սողար ու կը դառնար: Բաճկրնակին

գրպանէն դեղնած այցաքարտ մը ելաւ «Մարափրսս Եղիսաբետն» անունով ու քիչ մըն ալ դրամ, զոր ինամով իր տեղը դրին ու յուշկ քայլերով վար իշան Աննիկ հանըմի կրկնակ հրահանդներուն անսալով:

Իրաւամբ Տէրպէտէրն էր ան, որուն համար կ'ըսէին թէ ամէն գիշեր երազ կը տեսնայ:

Այդ գիշերուան իր տեսած երազը սակայն երազներուն ամենէն եղականը ու հետաքրքրականը եղաւ:

* *

Իր ընական սովորութեանը հակառակ երազ տեսնելէ առաջ երկար թմբիր մը ունեցաւ: Այդ թմբիրի միջոցին տեսու մօրուքոր և սեւ ճիւպէլի Սստուած պապան որ լուսարարէ մը աւելի նուրբ ճարտարութեամբ մը կապոյտ երկինքին երեսը սեփ մե վարագոյր մը քաշեց: Ու ինք մնաց սեփ մե մթութեան մը մէջ: Այդ Սեւութեան մէջ տարիներով ծփաց, ծփաց, ծփաց, մինչև որ հեռուէն մոլորակ մը նչմարեց: Եղունգին ծայրը մազնիսի վերածելով մոլորակը իրեն մօտեցուց ու մէջը մտաւ: Հաղիւ թէ մոլորակը կը ճեղքէր, երբ ահա ինքինքը գտաւ ամենի ովկիանսոսի մը մէջ, բոլորովին մերկ:

Լողաց, լողաց, ժամերով լողաց: Իր ուժերը սպառելու վրայ էին ալ, երբ հեռուէն ձկնորսի նաւակ մը նշմարեց:

— Շամակոլլի՛, շամակոլլի՛ սկսաւ պոռալ ձկնորսին, որ հապէշերէն կը նշանակէր ծերուկ:

Ծերուկը չիմացաւ: Տէրպէտէրը համբերելու ժամանակ չունէր: Սլիքները իր կոկորդը կը խոդէին: Երկութեւերը Հէրքիւէսեան ուժով մը բացաւ, ծովին ջուրերը իրարմէ բաժնեց և հեռուն զրկեց զանոնք: Նաւակը առ վերներուն մէջ յառաջ եկած այս նորօրինակ մէկ ճնշումին

հետեւանքով ամենամեծ ուժգնութեամբ դէպի իրեն եւկառ ու զարնուելով իր կուրծքին՝ ու պղտիկ վէրք մը յառաջ բերաւ :

Տէրպէտէր նստուեցաւ նուտ ակին մէջ, որ համակ վոլոս կրեայ էր : Նաւակին մէջ երկու նստարան կար, ոէմ դիմաց, որօնց մէջտեղը կար ամ ան մը : Այս վերջինին մէջ ալ կը գտնուէին ձուկեր : Ձուկերուն ամէն մէկը թիթեանիկի մը չափ, անդայն թիւեւք ունէր : Այդ ամ անը թելէ պատապարանով պատած էր, — որովհետեւ թուզով ձուկերէին անոնք և կրնային փափոխ :

Ծերուկը իր լեզուն քանի մը խօսք ըրաւ : Տէրպէտէր ի պատասխանի քանի մը լիշոց արտասանեց, զորս իրը ըրլրարմ ընտրած էր իրեն :

Յանկարծ բանեց նստարաններէն մէկը որ արդէն իր յետոյքին ճնշման տակ ճարճատած էր և ծովը նետեց :

Զինորար որ արդէն սկսած էր վախնալ Տէրպէտէրի կիլոպեան աշքերէն, անմիջապէս իր նստարանը փսխ տուաւ անոր և ինքը գետինը նստեցաւ :

Քիչ ետք այդ նստարանն ալ ճարճատեցաւ և ծովը նետեցաւ : Տէրպէտէր ոտքի վրայ մնալու չէր կրնար հանդուրժել ստկայն : Այն տաեն նշմարեց որ նաւակը թիւակ չունէր այլ չուանով կազւած էր փալտմուտ ձուկի մը որ գրաստի պէս կը քաշէր նստակր :

Կայծակ մը եկաւ, չուանն ու փալտմուտը առաւտարաւ : Անձանօթ հով մը սակայն օժանդակութեան հասնելով, շուառվ կարտացանց ցամաք հոտնիլ :

Զինորար անհանգիստ շարժումներ կ'ընէր : Տէրպէտէր ապագայ ամէն տեսակ պատահականութեանց առաջքը առնելու հսմոր մատղրեց վշրել նստակը : Յետոյ ստկայն փոխեց իր որոշումը :

Զինորար իր քաղաքացիի պարտականութեամբ դինքը առաջնորդեց քաղաքավետարան :

Գանուած տեղը երկրին մայրաքաղաքն էր ու կը կոչուէր Աքսեւրանա : Քաղաքասկեաը խմանալով իրողութիւնը հրամակեց որ երկրին լեզուն սորվեցնեն անոր և անկէ ետքը միայն հարցաքննութիւն : Ուզուածը շուտով կատարւեցաւ, որմէ զիրջ հարցաքննութեան ելու : թէպէտեանոգութ, քանի որ բան մը չհասկւեցաւ տակէ : Բօլանատաւ կ'ըստէր առ երկիրը և բուսական կզզի մէն էր : Հոն տակին թուղթի և թուղթը ուկիի տեղ կը գործածէր, եկեղեցիները մեր թատրոններուն կը նմանէին և աղօթքները բհմին վրացէն կ'ըլլացին : Դրամները հաստ թուղթերէ և աւելի արժէքաւորները խստաքարտէ էին : Ասկեղբամի տեղ կը բանէր քատակուսի կտրուած մաղաղաթներ : Բօլանտաղի մէջ թէ այր թէ կին երիկ մարդու հազոււաս կը հազնէին հստասարապէս և մազերնին ու մօրուքնին կը քերծէին :

Գմւար էր զանազանել Փօլանտացւոյ մը այր կամ էգը ըլլալը : Միմիայն մարդուհամարի տամարին մէջ արձանաւ գրուած էր այդ իրքեւ աւելորդ տեղեկութիւն և հասկնալ ուղղը կամ տամարը նայելու էր և կամ բաղնիքը, քանի որ հօն, երկիրը բաւական տաք ըլլալուն՝ առանց դենչակի կը լուացէին հստասարապէս :

Փողոցի մէջ մարդ չէր քաղէր, ամէն վոլոց ելեքտրական հանրակառք կար, աւելի աճապարանքի պէտք ունեցողներուն տրամադրելի էին սաւառնակներ :

Երկրին վեհապետը որ տակն տարի կը փոխէր, սովորութիւն ունէր տարին անդամ մը իր ներկայութեանը կանչելու բոլոր քաղաքացիները և իրենց դիրքին ու հանդստութեան մասին տեղեկութիւններ ուղելու :

Թողութիւնը յանցանք չեր նկատւած, այլ առաքինութիւն: Արով ամէնքն ապ կը գոզնացին և կը գոզցը նէին և աւեական ու ապահով սեփականութիւն չի կար: Իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունէր վեհառութեար երեք անդամ ծեծելու պայմանաւ որ փաստացի կերպով ապացուցանէր իր իրաւունք ունենալը: Ամուսնութիւնը ազատ էր և առանց արարագութեան:

Ամուսնութեան պօրսաներ կային իւրաքանչիւր քաղաքի մէջ, ուր այրեր և կիներ ինքինքին փոխադարձաբար աճուրդի կը դնէին հակառակորդ սեփ անդամներուն: Հոն յաճախորդները մեծ լրջութեամբ ու ծայրացել խոհեմութեամբ միայն զին կը բարձրացնէին:

Տակաւին շատ պօրսականերկար ուսումնափելիք բաց Տէրպէտէր շուտով ձանձրացաւ և դարձեալ ծովնետեցաւ եկած ձամբէն վերադառնողութեան: Դարձեալ ու մժութեան մը մէջ ինկու ու այս անդամ ուրիշ մոլորակ մը փոխադրուեցաւ: Այս անդամ առազու լուգարձակ անսապատ մընէր տեսարանը: Անտէր ուղարկու հանդիպեցաւ, որոնց վրայ կը հեծնէր կարգաւ: Իւրաքանչիւր ուղարկու ծանրութեան հազիւ թէ քառարդ ժամ մը կը դիմադրէր ու կը կըր և կ'աւանդէր իր հոգին: Քառասունը հնագերորդ ուղարկացար բաղդը ունեցաւ զինքը ողջ առողջ կայնանացի ովասիաը բերելու: Տէրպէտէր հոն ամէն կողմէ կիներ տեսաւ, շուտերը առանց արդուզարդի, Այր մարդնաւ գոյութիւն չունի եղեր սոյն երկրին մէջ:

Կիները զարմացման և սիրոյ արտայայտութիւններ կ'ընէին ի տես այս Աստուածառաք մարդուն:

Անհրաժեշտ կազդուրները իրեն արուելէ յետոց (կարելի չէ մասնալ անոնց անձնուեր ջանքերը որ ըրին կազդուրելու համար զայն), առաջնորդուեցաւ պալատ: Հոն իրեն բացարուեցաւ թէ երեսուն տարի առաջ այդտեղ կան եղեր ցատաւի ապացուցանակ առաջանակ մը որ իր մէջ կը պարունակէր երկիր մը, Այդ երկրագունդը ծովէն տասը հազար փարսախ վար կը գտնուէր և սակայն իր աչքին

տակաւին այր մարդիկ, որոնք իրենց անբարոյական և անպարկեշտ լութացքին համար այս կիներու կողմէ վարնատուեր են շատ հեռու ու անծանօթ վայրի տեղեր: Սարկա իրենց ունեցած ազգեցութեան և վայրագութեան մէկ ապացոյն էր: Տեղւոյն ցեղապետուհին պարզեց իրեն ներկայ և անցեալ կայութիւնը, տեղացւոց ենթակայ եղած դժբախտութիւնը, — սիրացին հաղումաշութիւններ պարզապէս, — ու առաջարկեց իրեն որ իր հետ ամուսնանայ:

Տէրպէտէր ժամանակ չունեցաւ այդ մասին խորհելու, անմիջապէս հազարաւոր կիներ ափ առին պալատին գուռը և զինքը կը պահանջէին ամենի և մեզերայաշայել պոռչութուքներով: Սարկա հցաւ չափել իր ուժերը, և կանացի բիրոտ խուժանի մը դիմադրելու ուժ չդանելով իր վրայ, անոնց կրից զան երթալէն նախրնարեց փախուսար: Հակառակ կողմի պատուհանէն վար նետւեցաւ ու իր սրունքներուն բոլոր ուժով վազեց: Կիները մինչև 100 քիլոմէտր տեղ անդոււ հետազողեցին զինքը, այս ասահճան որ հարկադրուեցաւ ծովն նետուիլ ու աւելի հեռուն երթալ: Ծովուն մէջ ալ իր դէմք ելան աղջկանց բանակ մը: Բայց այդ ծովու յաւերժանարաները կիսովին ձուկ էին և պոչերնին ալ ակնյաց կ'երեւար: Տէրպէտէր վախսէն քանի մը անդում չուրին մէջ վեր ի վայր ըջեցաւ: Մարմինը սաստկորէն կը գալարւէր, ականջները իրարու հակառակ ուղղութեամբ և անձանօթ ոյժերէ դրդուած կը դառնացին զարմանակի արագութեամբ մը և ինքը ցաւէն սաստկէ կը ասանջուէր: Յանկարծ կէտ ձուկի մը կանակը մազլցեցաւ ու սկսաւ ծովը դիտել: Եղմարեց ջուրին յատակը խոչոր և թափանցիկ ապակեայ գունդ մը որ իր մէջ կը պարունակէր երկիր մը, Այդ երկրագունդը ծովէն տասը հազար փարսախ վար կը գտնուէր և սակայն իր աչքին

հազիւթէ 10 մէթր խորկերենար և որ բնիքն իր վրայ թաւալիւով կը դատանար : Հօն քիչ մը անդին հրաշէկ պողպատի մը կտոր կար, տասը հաղար մէթր տրամադռով որ գուշնդին վրայ ելեք քարտկան լոյս կ'արձակէր , որոշակի բազմաթիւ ճառագոյժներով : Հօն տեսաւ նաև մարդիկ սրուք ողորմութիւն կուացին , մարդիկ սրուք կը ծեծկուէին , և կրօնաւոր մըն ալ ու մօրու քով : Պահ մը ինքնինք նախախնամութեան տեղ դրաւ և ուզեց ծեծկուողները պատմել , բաց կէտ ձուկը տակէն փախուծ էր արդէն : Այս անգամ ծավալին ջալլամը տեսաւ որ առջեր երկու և եւ տեսը մէկ սաք տնէր և իր մէկ կուզին մէջ ծավու ջուրէն ուզած քանակութեամբ կը պահէր : Այս թաշունը չուզեց իրեն իրեւ գրաւած ծառայել : Տէրպէտէր ձեռքը երկոցուց և խզդեց զայն : Այս գործոցութիւնը վեց ժամ տեսեց անընդհատ , այնքան կարծր էր անոր վիզը :

Յետոյ ծովամարդ թաշունը անցաւ : Այս թաշունը երկու սաք ունէր սրոնք — մարդուս պէս — իր մարմինին հօրիզոնական դիրքին շարունակութիւնն էին (եւ ոչ թէ թաշուններու պէս ուզգահայեաց) և ի հարկին ցամաքի վրայ կը սպար : Տէրպէտէր վրան հեծաւ : Վացրկենական կանաչազարդ ցամաք մը ելու : Եւ ահա իր զէմ ցցուած տեսաւ Հայր Սրբարի և Օր , Եսանդիկի ուրուականները սրոնք մէլմէկ հրաշէկ շզթայ բռնած իր վրայ կը յարձակէին : Մահու քրտինքներ ալորեր էին իր երեսը : Աշնանցմէ փակելավ պարպուած դինիփի տակասի մը մէջ մտաւորկէ գարձեալ կը տեսնէր Հայր Սրբարի և քրոջը ուրուականները տակառին ետին վախերնէն կծկուած : Այդ միջոցին իր աչքերէն Պօս և իժ օձեր կը ցացաէին , և կ'ըսպանային զինքը կուրցնել Կթէ . . . չարթինար :

* *

Հետեւեալ տուտուան գէմ ապակիի շառաչիւնի մը

ի լուր՝ Հայր Սրբար և Օր , Եսանդիկ վեր վաղեցին ամձակալից : Անկողինը պարապ էր և ճմոթկած , իսկ քովկատ պատուհանին ապակիները վնասաւած էին : Խնդիրը կարելի չեղաւ լուծելլի՛էն , բայց և այնպէս դրացիներու բաի-լուսաւներու և բամբասան քններուն զէմ թումմը մը կանգնած ըլլալու համար հարկադրուեցան բնակութիւննին այլուր փոխադրել : Փոխադրութեան յաջորդ օրն իսկ Հայր Սրբար երբեկ : Կամիրութիւն մը սկսաւ պատրաստել «Յաղագս երեւման Սասանայի» վերնազբով :

ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻ

ԱՅԲԱ

ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ

Կ. ՊՈԼԻՍ

Գրատունս իր երկար տարիներու օգտաշատ հրատարակութեանց վրայ աւելցուցած է այս տարի նետենեալ դասական եւ գրական հրատարակութիւնները 1944—1942 տարերջանին առքիւ.

Պ. Ասրունի. — Ամբողջական դասրերացք բուաբանութեան. *Մանկական Ընթացք* Ա. Բ. տարի: 3 ½ դր. Էմիլ Օքք (Թերզեան). — Ընթացք Ֆրանսերէն լեզուի. Թէ մեծի և թէ փոքրի կը սորվեցնէ ֆրանսերէն լեզուն կարդալ, գրել և խօսիլ առանց ուսուցչի, մէկ տարուան մէջ: Առաջին մաս:

Տ. Մուլատեան. — Ա. Ընթացք Անզդիերէն լեզուի. Քիչ ժամանակուան մէջ Անդզիերէն լեզուն կը սորվեցնէ: Առաջին և Երկրորդ հատորը միասին արժեն:

Մ. Նուպարեան. — Առաջեն Ֆրանսա-հայ բառան. Լատինական ասացուածքներա ճոխ յաւելուածով:

Լ. է թոլսրոյ. — Յարութիւն (երեք հատոր). Թարգմ. Ե. Օտեան: 20 դր.

Լ. է թոլսրոյ. — Անեա Քարենին (երկու հատոր) Թարգմ. Ե. Օտեան: 15 դր.

Եր. Օտեան. — Ապտիւ Համիս եւ Շերլօֆ Հօլմս (մեծ վեպ): 24 դր.

Ս. Պարբեւեան. — Հայունին (Հաւաքածոյ ընտրելույն նորավեպերու): 5 դր.

Նիրվանզատ. — Մեծարանքի Հքեղ հատոր մը Թըրքանայ ընտրելածոյն գործերու արտադրութիւններով, ձօնուած մեծանուն վարդապետին: 15 դր.

ՄԱՍԼՈՅ ՏԱԿ

Պ. Ասրունի. — Թուաբանութեան դասրերացքի մատցեալ տարիները:

Էմիլ Օքք (Թերզեան). — Մասցեալ մասերը:

Ն. Ա. Ա. Կ. Ա. Ն. Ի. (Ընդարձակ), Ընտանեկան, Առեւտրական և Առաջեն Տամարակալութեան և Վաճառական դիտելիք:

ԶՄԵՌՈՒԱՆ ՊԱՇԱՐ

— Համար 100 մաս

Փայտին ածուխին և սովորին նման ամէն մարդ պէտք է կանխառ մժերէ իր գրադարանին մէջ վիստական գիրքներ՝ ձմեռուան երկար գիշերները հաճոյալի և օգտակար կերպով անցնելու համար:

Զարդարեան Գրատուններ հնատեւեալ գեղեցիկ վեպերը այսարչի ամէն կողմը կը զրկէ առանց լուսի ծախս պահանջելու:

Վ. Հիւլիս. Թշուասներ 60 դր. իննառուն երեք 20 դր. Ե. Օտեան. Ապահով Համիս և Շէրլօք Հօլմս, 6 դր. դր.

Ա. Բիւրատ. Դիակապուտները 6 դր. Դէպի Երլարդ 6 դր.

Էմիլ Զօլայ. Արգամասուորութիւն 15 դր. Հազար և մէկ դիշերներ 36 դր.

Ա. Շիտանեան. Արսորականը 8 դր. Անդրանիկը 2,50 դր.

Քասիմ. Խորհրդաւոր աղջիկը 10 դր. Կարապետ 16 դր.

Տ. Սարգսեան. Շանէն ի Սիրիոր պատմ. վեպ 10 դր.

Մ. Ակմերնեան. Զէյթունի պատմութիւնը լավելու:

20 դր. Թոլսրոյ. Պատերազմ և խաղաղութիւն հատորը 5 դր.

Կօմի Սիւ. Թափառական Հրեայ հատորը 10 դր. Վ. Գ. Զարգարեան. Յիշատակարան հայ երեւելիներու, հատորը 30 դր.

Գրացուցակը ձրի Հասցե. — Վ. Եւ Պ. Զարդարիան եղբ. Կ. Պոլիս Զամարենիրար Թ. 24—26

ԳՐԱՎԱՀԱՐԱ - ՀՐԱՏԱՐԱԿԻ Զ

ՅՈՎԱՆՆԵՍ ԳԵԼԵՃԵԱՆ

Տամանակարար, թիւ 25

Այս գրատոննը որ քիչ ժամանակի մէջ մնծ համբար կի մը ափացած է իր ձշղապահութեան, գործառնութեանց կանոնաւորութեան և իր ներշնչած վասահութեան չորսիւ, ժամադրավայրն է բոլոր նոր հրատարակութիւններու և հնա դիմուր կը գտնէ ինչ որ իրեն պէտք է, դաստիան և զրական մթերք: Ահաւասիկ իր վերջնի դրական նորութիւններին համոց մը:	
46 պատկերներով գրեց Գ. Ծ. Վ. Արագածեան 6,50	
ԴՐԱԽՏԻ ԵՆՏԱՆԻՒԹՊԱՏԱԼԵՐԱՎԱՐԴ ԽԵՐԱՄԵԱՆ ՀԱՐԺԻԿ 7	
Ա.ՊՏԵՒԼ ՀԱՄԻՑ և ՇԵՐԼՈՅ ՀՈԼՄՍ Ե. ՕՏԵԱԽԻ Ա. Բ. Հ. Տ. 12	
ԵԼԱԾԵԶ ՍԱՍՈՒՆ 5 հատոր Ա. Բիւրաս 30	
ՍԱՍՈՒՆԻՆ ԵՏՔԸ 2 » » 42	
Ա.ՊՅՈՒՐԱԿՈՆԸ Ա. Շիտանեան 8	
Ա.Ա.ՉԱ.ԿՈ.ՊԵՏԸ » » 42	
ԻՆՆՈՒԻՆ ԵՐԵԲ 3 » Վ. Հիւկի 20	
ԵԼԻՄ. ՏԵՄԻՐՃԱՊԱՇԵՍՆԻ Միրային նամակները. 2.	
Նազարեանց 5	
Ա.ԶԱ.ՏՈ.ՐԱ.Ր ԲՈ.Ն.Ա.ԿԻՆ ՄՈՒՏՔԸ Պատկերավարդ 45	
ՊՈՒՏՏԱ.ՅԻ Ա.Ի.ՏՈ.ՐԱ.ՆԸ Ս. Գալիօննեան 3	
ԿՈ.ՐԱ.ՊԵՏ Ա.զգային լիւլ 4 հատոր 46	
ԵՐԿՈՒ ՍԻՐԱՀԱՅՆԵՐ 3	
ԵՐԵՍՈՒՆ ԴՐՈՒՇՈՎ ՀԱՐՍԱՅՈՂԻՆ ԲԱԴԴԸ Ազգ. Նո- րավելք 3	
ԹՈՒԻՔ ԹԵՐՈՐԻ ՕՐԵՐԵՆ 4,50	
ՏԱ.ՐԵՑՈՅՅ Ա.ՊՈՒՇԵՐՈՒ Ե. ՕՏԵԱՆ 2,50	
» ՇԱ.Ն.ԹԻ 5	
» Կիկօի Գ. Թորոսեան 3	
» ՀԱ.ՅԻՆԻ Ս. Մեսրոպ 7	
» ԱՄԵՆՈՒՆ Թեղիկ 12	
» ԿԱ.ՎՈ.ՇԵ Կավուօս 6	

Դիմել ՅՈՎԱՆՆԵՆ ՊԵԼԱՋԵՍՆ ԳՐԱՏՈՒՆ
Զագմագներար թիւ 25 Կ. Պոլիս, և սահնալ
գրացուցակը ձրի:

ԳՐԱՎԱՀԱՐԱ - ՀՐԱՏԱՐԱԿԻ Զ

Ա. ԵԱԶԸՆԵԱՆ

11 Պազրեբըրար, Սուլիան Համամ, Կ. Պոլիս

Ա. Եազրենեան Գրատունը նուիրական պարագ կը զգայ հրապարակու յայտնել իր սրապեալ չնորհակալիքն այն գորդութանքին համար զոր ի հանդէս բերեն գա-
ւանի ու արտասահմանի մեր ամէն կարգի յաճախորդները.
Կրովհետեւ,

1. Ա. Եազրենեան Գրատուն է որ ամենէն ձոխ Հրամմերքը համբարած է:

2. Ա. Եազրենեան Գրատուն է դպրոցներու բարե-
համ իր ընտրելագոյն դարձնիւայքներով:

3. Ա. Եազրենեան Գրատուն է որ բացառիկ զեղչ ուսաց իր յաճախորդներուն ու իրեն նոր զիմազներուն:

4. Ա. Եազրենեան Գրատուն է որ բարու զբավա-
համներէն աւելի նպաստուոր պայմաններով կը գոհացնէ երեն եղած յանձնաբարութիւնը:

5. Ա. Եազրենեան Գրատուն է որ ի վիճակի է իս-
կոյն հաղորդել զրավաճառութեան հրապարակի հետը ա-
շխնչակից ամէն տեսակ հարցի ու գործառնութեանց
մասին:

6. Ա. Եազրենեան Գրատան նշանաբանը կը կազմեն
Աւղամտութիւն, Պարկետութիւն, Շահեցել ու Շահի:

7. Ա. Եազրենեան Գրատուն է միակն զրավաճա-
ռական հրապարակի վրաց որ կը հայթայթէ աշխարհի
Հայ շրջանակներու մէջ տալազրուած ամէն կարգի գիրք
ու թերթ:

8. Ա. Եազբեան Գրատունը կեղրոնասեղի է ցար
անմրցելի մնացած դասինթացքներու :

Ա. Եազբեան Գրատունը վերջերս հրատարակած
բնդարձակ Գրացուցակ մը իր սեփական հրատարակու
թեանց հեղինակներու լուսանկարներով . գեղարուեատա
կան գրքուկ մը՝ որուն նմանը դեռ լոյս տեսած չէ և կ
մրցի Եւրոպական նոյն օրինակ հրատարակութեան
հետ :

Այս գրացուցակը փափաքողներու ձրի կը զրկո

Ա. Եազբեան Գրատան վերայիշեալ յաջողութիւն.
ները թելադրութիւններ են այն ցանցառ թուով գրասէր
ներու և դպրոցավար մարմիններու որ ցարդ չեն փ
ձած իրեն հետ գործառնութեան սկսելու , այժմէն վստ
կրնան ըլլալ թէ իրենք ու իրենց կարգին գո՞ս պի
մնան առաջին յանձնարարութենէն իսկ :



ՈՒՆԱԴՐԻՑԻԹԻԿԻ Գրատանս հասցէի

درسعادتده سلطان حامنده باقرييلرده نومرو ۱۱ آ. يازيجيان
کيچانه می

Mr. A. YAZIDJIAN

Libraire-Editeur

Sultan Hamam Bakirdjilar N. 11

CONSTANTINOPLE

0022135

10-70



